ՈՒՐՑԵԼ ՍԱՀԱՐԻ

ԷՐԿԷՐԻՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

„Հայաստան" Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ

ՊՈՒՐՑԵԼ ՍԱՀԱՐՍ

ԷՐԿԷՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայր Էրկրորդ

„Հայաստան" Հրատարակչություն
1967

Ս 19
Ap 2

ՀԱՄԵՍՏ ԻՄ ՎԱՍՏԱԿԸ՝ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ
ԸՆԿԵՐ ԱՆՏՈՆԻՆԱՑԻՆ։

Գ. ՄԱՂԱՐԻ

Гурген Григорьевич Маари

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ В ПЯТИ ТОМАХ
Том II

(На армянском языке)
Издательство «Айастан»
7—3—3 Ереван, 1967

Ցնծություն

Մանկություն իմ ոսկեծամ,
մանկություն իմ, որ անցար
նոր ծլած արտից...

Գ. Մաճառի

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Ճի՞շտ է, որ մարդիկ այն ժամանակ են սկսում մտածել իրենց մանկության մասին և հուզվել նրանով, երբ ծերացած են լինում... Չեմ կարծում։ Ես միշտ էլ հուզվել եմ իմ մանկության հիշողություններով, միշտ մտածել եմ այդ երազային օրերի մասին և հիմա, երբ դեռ երիտասարդ եմ, ուզում եմ գրել այդ, նորից կրկնենք, երազային օրերի մասին։

Տարիները աղոտել են շատ բան. օ՜, այո, շատ գծեր են ջնջվել և շատ պայծառ դեմքեր մշուշվել։ Ես ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող ոսկե մակուրկից։

Մի ժամանակ ես մտքիս մեջ դուրս էի գալիս մեր տնից և ուզած ուղղությամբ գնում էի Ամեմ-խաշոյենց տուն, կամ Սահակ-բեյի փողոց։ Ես մանրամասն պատկերացնում էի յուրաքանչյուր տունն ու ծառը, յուրաքանչյուր փողոցի ճյուղավորումներն ու նրանց հեռուն։

Զմփ-զմփ մաղարան տեսնում էի ափիս մեջ, Համուդաղայի ղշլան՝ ինչպես սեղանիս վրա դրված ահա այս թանաքամանը. հիմա ես շատ բան եմ շփոթում, ու շատ գծեր են մթնել հիշողության կապույտ քարտեզի վրա...

...Ինձ մնում է փրկել մնացածն ու հնարավորը։ Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել հեշտ և թեթև, գրել և զգալ, որ քունքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծա՞ռ, պայծա՞ռ, այն քաղաքի երկնքի նման, ծովի կապույտի նման, այգեստանների կանաչի ու լուսնկա գիշերների խորության նման։

Գրել։

1. ՄՈՒՏՔ

Առաջին բանը, որ ես հիշում եմ, մորս թանաքոտած ստինքներն են։ Ես չեմ հիշում, թե ինչպես այն ժամանակ մայրս պատճառաբանեց իր այդ անթույլատրելի քայլը, չեմ հիշում և այն, թե ինձ բավարարեցի՞ն նրա բերած փաստարկումները, թե ոչ... Բայց հետագայում, երբ ես մեծացա, ականատես եղա փոքր եղբայրներիս նմանօրինակ ճակատագրին, պարզվեց, որ այդ մայրական ներկարարությունն անհրաժեշտ մի ակտ էր, որպեսզի արդեն որոշ տարիքի հասած և դեռ մայրական կաթի վրա համառող երեխաներին հիասթափեցնեն կաթի աղբյուրներից։ Այս, ըստ երևույթին, մեղմ, դիվանագիտական միջոցը, սակայն, ինձ վրա պետք է որ ահռելի տպավորություն թողած լինի,— ահա թե ինչո՛ւ դա դարձավ իմ առաջին հիշողությունը։

Սակայն այդպես չպատահեց փոքր եղբորս հետ, երբ մայրս նրա համար թանաքոտեց իր ստինքները և համապատասխան կոմենտարիաներով ներկայացրեց նրան («էլ չուտես, չուտես, փի՛ս ի, փի՛ս...»), նա առանց այլևայլության հարձակվեց ստինքներից մեկի վրա և շրթունքներով բռնեց։ Սրա արդյունքն եղավ այն, որ մեր հիմարիկի շրթունքները թանաքոտվեցին։

Այն ժամանակ ես մտքիս մեջ նրան անգիտակից և անխելք համարեցի, որ չկարողացավ ինձ նման ըմբռնել բոպեի լրջությունը և հրաժարվել կաթից։ Բայց հետագայում, երբ նա մեծացավ և դարձավ հանդուգն կոմերիտական, ես հասկացա, որ նա՝ փոքր եղբայրս, ոչ թե չհասկացավ պատահածը... օ, ոչ, նա պարզապես դրանով ուզեց ասել. «Ձեռ վախեցնի ինձ քո ներկերով, ես կաթ եմ ուզում և պիտի ուտեմ...»։

Մորս թանաքոտած ստինքներից հետո ինձ համար բացվեց մի նոր շրջան, և ես սկսեցի ունենալ կոնկրետ և յուրատեսակ պատկերացում ինձ շրջապատող մարդկանց և իրերի մասին։

2. ԻՄ ՏԱՏԸ

Թե ինչո՞ւ իմ մանկական տարիների մեծ մասը ես ոչ թե մորս մոտ, այլ տատիս մոտ անցկացրի, այս մասին գրելը շատ երկար կլիներ։ Կասեմ միայն, որ շաբաթվա մեջ հազիվ մի երկու օր հյուր գնայի մեր տուն. մնացած ժամանակը ես ապրում էի տատիս մոտ։ Մայրս ինձ համար Անուշ էր, տատս՝ մայրիկ, նրանց տունը՝ «մայրիկանց տուն»... Քեռիս տարվա մեջ միայն ձմռան ամիսներին էր լինում տանը. մնացած ժամանակ նա գյուղ էր գնում և մի կողմից տնտեսությամբ էր զբաղվում, իսկ մյուս կողմից, ինչպես տատս էր ասում, «դաշնակ կոմիտե էր»...

Մայրիկանց տան այգու դռան դիմաց մի վիթխարի բարդի կար կանգնած։ Կնստեր տատս նրա մոտ, կգործեր գուլպա և կպատմեր ինձ զանազան հեքիաթներ։ Հիշում եմ, որ նրա հեքիաթներից մեկը կարողացավ ինձ լացացնել։ «Զամբիլ-Ֆրոշ» էր կոչվում այդ զարմանալի հեքիաթը, որի բովանդակությունը, սակայն, չեմ հիշում...

Տատս ամեն օր, օրվա մեջ մի քանի անգամ, խոստանում էր ինձ՝ 15 տարեկան դառնալուս պես պսակել. այս ասում էր նա այնպիսի գորովոտ գուրգուրանքով, որ ես մի օր տատիս բավականություն պատճառելու համար ասացի, որ այս հասակիս մեջ էլ պատրաստ եմ պսակվելու, և որ կարիք չկա սպասել մինչև 15 տարեկան դառնալս։ Իմ այս ծայրահեղ անձնվիրությունը, սակայն, ոչ մի հաջողություն չունեցավ, և ի մեծ զարմանք իմ, տատս սկսեց օգտագործել այս փաստը դրացի կանանց մոտ և ծիծաղել ու ծիծաղեցնել ինձ վրա... Այնուհետև ես իմ առաջարկությունն այլևս չկրկնեցի հակառակ տատիս, որը նույն եռանդով շարունակում էր լրինել.

— Տասնհինգ տարեկան որ էլավ, իմ Գուրիսին կպսակեմ...

Հետաքրքիրն այն էր, որ նա իմ մասին խոսում էր երրորդ դեմքով, կարծես այդ ամենը ոչ թե անմիջորեն ինձ էր վերաբերում, այլ այդ ամենն ասում էր նա ինձ ի գիտություն, մի ուրիշ մարդու մասին...

Տատիս անունը Յուղաբեր էր։ Հետագայում, երբ ես տե-

վրեցի բարդ բառերի և նրանց կազմությունների մասին, տատիս անունը շատ անգամ վերլուծեցի, բայց ոչ մի եզրակացության չեկա։ Հասակակից կանայք նրան Օղիկ էին ասում պարզապես, իսկ երիտասարդ հարսները՝ Օղի խաթուն։ Թե ինչո՞ւ այդպես անողոք կերպով կրճատում էին նրա առանց այն էլ կրճատված անվան վերջին տառը և այդ բարեհամբույր պառավին անգիտակցաբար վերագրում մի խելագարեցնող խմիչքի անուն, ես այդպես էլ չհասկացա։ Յուղաբերի հետ մինչև հիմա էլ չեմ հաշտվում, բայց ահա Օղիկ... լավ է ասված, իսկապես նա մի փոքրիկ, փայլուն օղ էր իմ մանկական հիշողությունների շողշողուն շղթայում...

Տատս ինձ սովորեցրել էր մի քանի աղոթքներ։ Բացի աղոթքներից, նա գիտեր նաև կրոնական բանաստեղծություններ։ Դրանցից մեկը ես հիշում եմ։ Գուլպան ձեռքին, նա արագ-արագ գործում էր, տող-տող ասում յուրօրինակ եղանակով, և ես կրկնում էի.

Դու անթառամ ծաղի՞կ ե՞ս,
վարդի նման հոտով ե՞ս,
փո՛ւնջ մանուշակ ազնիվ ես,
Աստվածածին, մեղա քեզ...

Այս «Աստվածածին մեղա քեզ»-ը կրկնում էր բոլոր տների վերջում, երբ տող մի կերպ ծամծմում էի տատիս հետ, շորրորդին բարձրաձայն հպարտությամբ վրա էի տալիս.

— Աստվածածին, մեղա՛ քեզ...

Ամառային արևը կկանգներ ուղիղ գլխիս (երբ ես դեռ փոքր էի, արևը մե՛ծ, շատ մե՛ծ էր...), ու մի թանձր լռություն կխառնարը շուրջը։ Տխար՝ մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների թևերի բզզոցի ուժգնությամբ, կամ մի թեթև հովից Այգեստանի ծառերի տերևները շրշվեցին, և լսվեց այդ ձայնը ծովի ալեկոծության պես ալիք-ալիք թավալումով։

Օրվա այդ պահերին այգու դռանը կանգնած վիթխարի բարդին ավելի երկար էր թվում ինձ և ավելի ուղիղ։ Այնժամ տատս աչքը կբարձրացներ վեր և կասեր.

— Կեսօրվա դիվան կայնե...

Ի՞նչ բան էր այդ «դիվանը», ես իսկի չհարցրի, հիմա էլ չգիտեմ նրա նշանակությունը։ Մի միստիկական բան էր թվում ինձ այդ, մի ֆանտաստիկ տպավորություն էին թողնում ինձ վրա տատիս այդ խոսքերը, և ես չէի հարցնում, որովհետև ինձ թվում էր, որ գիտեմ դրա նշանակությունը...

— Կնստվա դիվան կայնե...

3. ՀԱՅՐՍ

Հիշում եմ, որ մեկը մեռավ, թե՞ սպանեցին, թե՞ իրեն սպանեց։

— Աճմոնց պարոն Քրիքորը...

— Քո խոր՝ քեռիդ սպանեց,— ասաց գրեթե շշնջալով՝ ինձանից մի քանի տարով մեծ, մեր դրացի Ծերունը։

— Ինչի՞...

— Դղեզ, չե՞ս գիտե, հերդ. արմենակայն էր, քեռիդ՝ դաշնակ

— Բա քո խե՞րն ինչ ի...

— Հնչակ...

Հնչակ, դաշնակ, արմենակ,— միայն ա՛յս մնաց հիշողությանս մեջ, այս եղերական զրույցից։

Բայց մի անգամ ես մորս հարցրի.

— Քրիքոր աղեն դո՞ր ի...

Նա պատասխանի փոխարեն արտասվեց, մեծ ցավ պատճառելով ինձ։ Չեմ մոռանում, Ես նայում էի մորս դեմքին, նրա արցունքներին, ու նա փոքրիկ աղջկա պես էր լալիս։ Հիմա էլ նա ինձ այդպես է պատկերանում և այդ իզուր չէ. մայրս շա՜տ մանկամարդ էր, երբ հայրս թողեց աշխարհը...

Մի անգամ, երբ ես մայրիկանց տանն էի և նիրհում էի տաք քուրսու տակ, մտածում էի այն մասին, որ դրսում ձյուն է գալիս և որ հարկավոր է անպայման դադարելուն պես մոխիր տանել, ցանել այնտեղ, ուր ծաղկում են բարդիսաբախներն ու զամբեխները, որպեսզի ձյունը նրանց վրայից շուտ հալչի, և նրանք շուտ ծաղկեն։ Ես այս մտքերի մեջ կիսարթուն օրորվում էի, իսկ տատս գուլպա էր գործում։ Ներս

մտավ խուռի խաթունը՝ մեր դրացուհին, և տատիս հետ սկսեց խոսել։ Ինչից սկսեցին՝ չգիտեմ, բայց ահա տատս պատմեց նրան հորս մահվան խորհրդավոր մանրամասնությունները։

— Սև էլներ էն գիշեր՝ չլուսնար։ Մունջ էապես նստեր ինք քուրսու տակ. Տիգրան էնտեղ, Անուշն էնտեղ, Քրիքորն էնտեղ... Քրիքոր ըռուվել դուս հանեց, ասաց՝ սրբեմ... դեն տար, ասի, Քրիքոր, էդ սատանի բան... ծծղաց, ասաց՝ մի վախենա, մեջ բան չկա... էդ ասելն էր, մեկ էլ՝ կըրրփ... ճրագն ընցավ...

— Ճրա՞գն ինչի ընցավ...

— Ի՞նչ գիտեմ... վառեցինք ճրագ... Քրիքոր, Քրիքոր... ձեն չի հան... գյուլլեն արտից էր կպել... մի պուտ արուն չկաթավ... Տիգրանին բանտ դրին... արմենականներ ասին, որ դաշնակ կոմիտեն զարկեց՝ Տիգրանի ձեռքով... Անուշ վկա կայնավ, որ իր ձեռքից գնաց՝ բաց թողին...

Պարզվեց ավելի սարսափելին. աղետից հետո, երբ քընություն է կատարվել դեպքի վայրում, մայրիկանց տան նկուղում գտել են փորված և չծածկված մի փոս. երկաթուղուց հարյուրավոր վերստերով հեռու, գավառական այդ քաղաքում լուր է տարածվում, որ այդ փոսը փորված է եղել նախապես նրա համար, որպեսզի քեռիս հայրիկիս սպանելուց հետո նրա դիակը թաղի այնտեղ։

Տատս հավատացնում էր, որ այդ ամենը սուտ է, որ, ճիշտ է, նկուղում փորված է եղել փոս, բայց այդ փոսը փորված է եղել նրա համար, որպեսզի այնտեղ թաղեն ձմեռվա համար աղած պանրի մեծ ամանները... Ես լսում էի այս ամենը և ուզում էի ճչալ... բայց ճչալու փոխարեն ես, առանց աչքս բանալու, սկսեցի հեկեկալ։ Տատս կանչեց.

— Գուրիս, Գուրիս... ի՞նչ էլավ իմ Գուրիսին...

Իսկ խուռի խաթունը նկատեց.

— Քնի մեջ կուլա... Օղի՛...

— Գուրի՛ս, Գուրի՛ս, ինչի՞ կուվա իմ Գուրիս...

Այս պատմությունը, հորս եղերական մահվան պատմությունը, մնաց մութ։ Երբ ես արդեն մեծացել էի, տարիներ առաջ, երբ քեռիս դեռ ողջ էր, մենք տեսնվեցինք Ռոստովում։

Նա ինձ հայտնեց, որ, ճիշտ է, գնդակը իր ձեռքից է գնացել, բայց այդ եղել է բոլորովին պատահաբար, շատ արկած և ուրիշ ոչինչ։ Մենք մակույկով շրջում էինք Դոնի վրա, երբ նա պատմում էր ինձ այս ամենը։ Եվ ջրի խշշոցի միջից ես լսում էի վաղուց մահացած խուռի խաթունի հարցը.

— Ճրա՞գն ինչի ընցավ...

Մուժ։

4. ՔՈԻՅՐՍ

Թե ինչո՞ւ նա խելագարվեց, չգիտեմ, բայց նա խելագարվեց տասնյոթ տարեկան հասակում, քույրս՝ Ադրինեն։

Ոմանք ասացին, որ նրան խելագարեցրեց հորս մահվան խորհրդավոր մանրամասնությունները տեղյակ լինելու և ասել չկարողանալու կսկիծը, բժիշկները մի բան ասին, գրքացները՝ մի, և մեջտեղ մնաց իմ խելագարված քույրը՝ Ադրինեն։

Սկսեց մելանխոլիայից. հենց որ մութն ընկներ, կգնար կնատեր տանիքը և ժամերով կնայեր աստղերին։ Մայրս հառաչում էր և լռում. հետո նա նեղս էր մտնում ցրված մազերով և շշմած աչքերով։

— Ի՞նչ կանիր, Ադրին,— կհարցներ մայրս։

— Աղոթք կանի,— լինում էր պատասխանը. այսպես ամեն օր։

Բայց ահա նրա խոսվածքի մեջ նկատվեց խանգարում, աստիճանաբար այդ խանգարումը շեշտվեց ավելի, և մի օր էլ նա, խոսելու փոխարեն, կարողացավ միայն ինչ-որ հընչյուններ բաց թողնել, ինչ-որ բան հասկացնելու համար։

Զափազանց կարճատև եղավ խաղաղ համբույրյան այդ շրջանը. դրան հաջորդեց կատաղության շրջանը, ծեծելու, փշրելու, փշացնելու, անզուսպ ցասումով լալու և ուտելու, ուտելու շրջանը։ Ուտում էր գիշեր և ցերեկ, ուտում էր գազանային մոլուցքով, իսկ ով որ համարձակվեր նրան խանգարել, արճճի նման ծանր բռունցքը պատրաստ էր։

Հետո երգում էր. ի՞նչ էր երգում. գոյություն ունեցող երգերից և ոչ մեկը. ինչ-որ մելամաղձոտ հնչյուններ էին նը-

բանք, ինչ-որ երգ հիշեցնող հեծեծանքներ, որոնք ահավոր էին դառնում գիշերները։

Հանկարծ կորչում էր. փոքր եղբայրներիս հետ վազվզում էինք այս կողմ, այն կողմ, չէինք գտնում. երկու-երեք ժամ հետո մի բարի տատիկան նրա ձեռներից բռնած բերում էր։

— Մի՛ թողնեք դուրս էլնի,— ասում էին նրանք սովորաբար,— խող կուտի, տղաներաց կը տիրի։

Մեր թաղամասի համար մեր տունը դարձավ սարսափի տուն. մայրս հավատացնում էր, որ մի անեծք է իջել մեր տան վրա. պատմում էր նա դրացիներին, որ այդ դժբախտություններն սկսվեցին այն օրից, երբ հորեղբորս տղան՝ Լևոնը, սպանեց մեր ցախատան մեջ բույն դրած օձին. այդ օձը մեր տան բախտի պահպանողն էր. սպանվեց օձը, դժբախտություններն սկսվեցին մեկը մյուսի հետևից։ Այդ օձը ոսկե պուպուշ (կատար) է ունեցել։

Վերջին անգամ նրան տեսա՞, թե երազեցի գաղթի ճանապարհին. մեծ ճանապարհի եզերքին ընկել էի սարսափելի տենդի մեջ, մեծ ճանապարհը ոլորվում էր մի ձորամիջով, մեծ ճանապարհի վրայով սոսկահար փախչում էր մի ամբողջ ժողովուրդ...

Ես լսում եմ հեռու, ծանոթ մի ձայն և ճիգ եմ անում ծանրացած աչքերս բանալու, այնտեղ, վերևում, մի քարի վրա նստել է իմ քույրը՝ Ադրինեն, և ճչում է ու ծնկները ծեծում. դեղին արևը լերդանում է իմ աչքերի մեջ, և ես նորից ուշաթափվում եմ...

Ես այլևս չտեսա նրան։

Ներիր, սիրելի Ադրին, մի անգամ ես չկարողացա ինձ զսպել և քեզ խփեցի ու փախա. և որովհետև դու համր էիր, չկարողացար այդ մասին գանգատվել։

Դու սև աչքեր ունեիր և ունեիր գեղեցիկ հասակ, դու աշխարհ եկար և ունեիր իրավունք ապրելու, սիրելու և սիրվելու, բայց հենց կյանքիդ արևոտ առավոտյան, քո կյանքը դարձավ մի զարհուրելի գիշեր։ Քո եղբայրը դեռ ապրում է, սիրելի Ադրին, բայց նա չի մոռացել քեզ. նա կցանկանար, որ դո՛ւ էլ հասնեիր այս արևոտ օրերին...

Իմ քույր, Ադրինե՞...

5. ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Ես լսում եմ տատիս ձայնը. նա արթնացնում է քեռուս.

— Տիգրա՛ն, Տիգրա՛ն...

— Ի՞նչ է...

— Էլի՛, շներն էկան։

Այգու դուռը ծեծում են կամաց, շատ կամաց. ես վեր եմ թռչում, վազում եմ դեպի պատուհանը և նայում եմ դուրս, դեպի այգու դուռը։

Այնտեղ երևում են մարդկային ստվերներ։

Քեռիս արագ հագնվում է, իջեցնում է վարագույրները ու վազում է ներքև, այգու դուռը բանալու։ Տատս տրտնջալով հագնվում է, իսկ ես կիսամերկ վազում եմ դուրս։

— Գուրիս, նեռ արե. կը մտե՞ս...

— Մայրիկ, վո՞վ էկավ։

— Կաչաղներ... եթիմներ...

Նրանք բարձրանում են սանդուղքներով, մեկ, երկու, երեք, չորս, քանի՞սն են. գալիս են ծանր ու դանդաղ, կարծես գետնի տակից են բարձրանում...

Ներս են մտնում նրանք, մեծ-մեծ փափախներով, խաչաձև փամփշտակալներով, ոտից մինչև գլուխ զինված և պարհուրելի։ Նրանք ուրախ-ուրախ խոսում են, ազատվում են զենքերից, հանում են «զգմանները», փափախները... է՛, փառք աստծու, հիմա կարծես նրանք մի քիչ մարդու նման դարձան։ Նրանցից մեկն իր փափախը դնում է գլխիս, փափախն իջնում է մինչև վիզս, և ես շնչասպառ եմ լինում...

Հետո լսում եմ շուրջս անուններ, անուններ ինձ վազուց ծանոթ, որոնց կրողները եղել են ինձ համար լեգենդար անձնավորություններ. Սարգիս, Իշխան, Արամ, Կոմս... Իշխանն ինձ դնում է իր ծնկների վրա, ատրճանակը տալիս է ձեռքս և բացատրում, թե ինչպես պետք է «կռակել». նա բոլոր r-երը ռ է արտասանում, և այդ թողնում է ինձ վրա մեծ տպավորություն։

Ապա թե քեռիս տատիս աչքով է անում, իսկ տատս՝ ինձ. ես բռնում եմ նրա ոսկրուտ ձեռքը, և մենք՝ ես ու տատս, սանդուղքներից վար ենք իջնում. նրանք մինչև լույս մնում

են այնտեղ, փակ դռների և պատուհանների հետև, խոսում են, վիճում, ծրագրում։

Ա՛խ, տեսնես ինչ են ծրագրում...

Հիշում եմ, մի ավելի բազմամարդ ժողով էր. այնտեղ էին նաև «դաշաղները» քաղաքացիական շորերով և ֆեսերով։ Այդ օրը չգիտեմ ինչպես և ինչու ինձ մոռացել էին դուրս ուղարկել. կար նրանց մեջ մի անձնավորություն, որ ամենից շատ ինձ հետաքրքրում էր. նիհար, սև-սև մի մարդ էր նա, փոքրիկ նեղ աչքերով և ծխից դեղնած ատամներով։ Նա անդադար ծխում էր և չէր մասնակցում վիճաբանություններին. այդ մարդն իմ ուշադրության կենտրոնն էր այդ օրը ոչ առանց հարգելի պատճառի. մի քանի օր առաջ, երբ ես դպրոցից տուն էի վերադառնում, փողոցում հանդիպեցի այդ, այո, իսկ և իսկ այդ մարդուն. չգիտեմ ինչու ես կանգնեցի ու սկսեցի նրան նայել. նա եկավ, հավասարվեց ինձ, առաջ անցավ, իսկ ես չէի կարող հայացքս բաժանել նրանից։ Մի մութ և հետաքրքիր բան կար նրա դանդաղ քայլվածքի, ձևերի մեջ. ահա նա առաջ է գնում, ձեռները տեղավորած շալվարի գրպաններում և գետնին նայելով։ Հազիվ սաստը քայլ նա հեռացել էր ինձանից, երբ հանկարծ պատահեց մի անսպասելի բան. նա ետ դարձավ և երկու քայլ անելով դեպի ինձ՝ ատամների միջից ֆշշաց.

— Շան լակոտ, ի՞նչ կիրիշկաս...— ես ճչացի և սար սափահար լացով փախա ու երբ բավականին հեռացել էի նրանից, դանդաղեցրի քայլերս և շարունակելով լացս՝ տուն հասա ու տատիս պատմեցի եղածը՝ լացի համապատասխան հավելումներով։

Տատս մտնելով իմ դրության մեջ, ինձ խաղաղեցրեց վարձատրեց իմ տառապանքը մեղրածոր փախլավայով։

Եվ ահա այդ մարդն էր, որին ես անսպասելիորեն հանդիպում էի ժողովում. ես վախենում էի երկար նայել նրան, բայց չէի կարող չնայել։ Ի՞նչ կար նրա մեջ ուշագրավ, ես մինչև հիմա էլ չեմ կարող վերականգնել։ Եվ երբ մորեղբայրս զբաղված էր գլանակ փաթաթելով, ես մոտեցա նրան և շշնջալով հարցրի «սև մարդու» անունը.

— Խուան, —պատասխանեց նա և չգիտես ինչու անհան-

գիստ նայեց նրա կողմը. նա լուռ ծխում էր և լարված ուշադրությամբ լսում։

Ես վար եմ իջնում, գնում եմ պարտեզ և նստում եմ թթենու տակ. ապոնակները թութ ճաշակելիս նրանցից հատունները չեն դիմանա նրանց կծցահարությանը և վար կընկնեն ինձ համար։

Առաջին թութը վար ընկավ, իսկ ապոնակը, թևերը թափահարելով, փոխեց իր տեղը։

6. ՎԱՆՔԸ

...Զանգի զոզանց եմ հիշում,
նեղ արահետ, անտառ, շուն
ու գառների ճիրմակ,
անհուշ լեռան մի ուսից,
բարձրացող վանք ու լուսին,
և ինչ-որ վրան...
(«Երևի բարդի», Գ. Մաճառի)

Հայոց ձո՛ր, Հայոց ձո՛ր...

Այնտեղ, մի բլրի վրա նստած էր խեթի անգամբեթ վանքը. այնտեղ կարկաչեցին իմ մանկության լավագույն օրերը։

Մորեղբայրս գնել էր վանքի բոլոր կալվածների երեսը երեք տարով, պահում էր հոտեր ոչխարների և կովեր էր պահում առողջ կրծքերով։

Հենց որ գարունը բացվեր, տատս կնստեր ձի, մի գյուղացի կբարձրացներ ինձ, կդներ ձիու գավակին, հետո կքրոներ սանձից ու կընկներ ձիու առաջ. այսպես մենք կանցնեինք դաշտեր և բլուրներ, նորից դաշտեր և բլուրներ, կանցնեինք գետը խոշարա, գյուղն Աստվածաշեն և կհասնեինք վանքի պարիսպներին։

Մի շուն կհաչեր, հետո կբացվեին վանքի դարբասները, և մենք կմտնեինք վանքի բակը։

Մյուս օրը ես ձեռնամուխ եմ լինում շրջապատիս ուսումնասիրությանը։ Նախ մտնում եմ [illegible] Անշուշտ խորանի խորից նայում է աստվածամոր Նկարը։ [illegible]

խորան և շոշափում եմ նկարը. հետո ինձ թվում է, որ մեղք գործեցի, և իջնում եմ խորանից։ Գնում եմ վանքի պարտեզը, հավաքում եմ ծաղիկներ և թարմ ճյուղեր, բերում, զարդարում եմ աստվածամոր նկարը։ Երբ վերջացնում եմ արդուզարդը, ուզում եմ նորից շոշափել նրա դեմքը, մի մատով դիպչել նրա կրծքին, բայց չգիտես ինչու սկսում եմ դողալ. ես դուրս եմ փախչում եկեղեցուց։

Վանքի դռան վրա կանգնել է մի գյուղացի՝ արտասվալի աչքերով, և ինչ-որ բան է խնդրում տատից.

— Ասա՛ վանահայր Տիգրանին...

Կես ժամ հետո գալիս է «վանահայրը», սպիտակ, լայնեզր գլխարկով և սևացած դեմքով։

— Տիգրան,— դիմում է նրան տատս,— դու աստծուց չե՞ս վախենա...

— Ի՞նչ կա,— զարմանում է քեռիս։

— Ցավ ու չոռ կա... էդ խեղճ մարդկանց ինչի՞ զոռով զենք առնել կուտաս։

— Քո բան չի...

— Դու աստված չունես,— վրդովված բացականչում է տատս,— էն խեղճ Ավդոն ունի-չունի՝ երեք էծ ունի, դու կպել ես, թե՝ ծախի, զե՞նք առ...

— Էնպես էլ պիտի անի...

— Ապա ի՞նչխ ապրի, եթի՛մ, կնիկ, մեր, մանուկ...

— Կոմիտեի որոշումն ի... մի՛ խառնվի կոմիտեի գործերաց...

— Պրիշակ դառնա էդ կոմիտեն,— անիծում է տատս և դուրս է գալիս սենյակից։

Մի օր էլ ամբողջ վանքը կանգնեց ոտքի...

— Իշխան, Արամ կուգան։

Եկան նրանք և լցվեցին վանքի սենյակը։

Ես փնտրեցի նրանց մեջ խորհրդավոր խուանին և չգտա։

Ժողով։ Քեռիս խոսեց այն մասին, թե ինչքան զենք է ծախված, քանի հոգի են գնել, քանի հոգի՝ ոչ։

— Ովքե՞ր են զենք չգնողները,— հարցրեց Իշխանը՝ բարակ բեղերը ոլորելով։

Քեռիս կարդաց երեք հոգու անուն։

— Անմիջապես բեռել տալ։

Վանքի մշակը վազեց Էրեմեսի գյուղը, մի թուղթ ձեռքին։ Մեկ ժամ անց, երեք երիտասարդ գյուղացիներ գլխիկոր կանգնեցին դռների մեջ։

— Խառանի ճակատագիրն պիտի լինի ձեր ճակատագիրը,— որոտաց Արամը։

Ժողովը փակեցին և դուրս եկան վանքի մեծ բակը։

— Ապա,— դարձավ Իշխանը երեք գյուղացիներից մեկին,— մոտ առի՞։

Մեկը սոսաջ եկավ։

— Դու ինչո՞ւ ոչնչ չես առնում։

Գյուղացին շոքեց գետնի վրա և բաղուկները տարածեց.

— Իշխան փաշա ջան, ոտներիդ խողն եմ...

— Պատասխան տուռ... մի քառշ գա...

— Ջրմ կանա... մեկ կով ունեմ, էն էլ ծախեմ, ճժերաց ի՞նչխ պախեմ...

— Կոճա Դավո՛,— ասաց Իշխանը,— դոռժի անցիր։

Կոճա Դավոն, մի փոփոխավոր աժդահա, մտրակը ձեռքին առաջ եկավ։

— Տո՛ւ դուան...

Բարձրացավ մտրակը և շաչեց ծնկաչոք գյուղացու վզին. նա ցավից կծկվեց և ուզեց վեր կենալ։

— Տո՛ւ,— լսվեց Իշխանի անողոք ձայնը։

Եվ մտրակն սկսեց գործել։

— Թողեք,— աղիողորմ ձայնով կանչեց գյուղացին,— կառնեմ, տասը կառնեմ, կծախեմ կովս, ՝ կնկաս կծախեմ, զենք կառնեմ...

— Այդպես,— մռռաց Իշխանն ատամների միջից,— վաղուց պիտի մտածեիր... իսկ դո՛ւք,— դարձավ նա մյուս երկու գյուղացիներին։

— Կառնենք,— եղավ պատասխանը։ Մեկը նրանցից ճկույթը տարավ աչքերին, այնտեղից արցունքի մի կաթիլ հանեց և թափ տվեց գետնին։

— Գնացեք,— այս անգամ խոսեց Արամը,— 24 ժամվա ընթացքում կներկայանաք Միրախորյան Տիգրանին, փոխ-

բով... կատանաք «կարճ մտել»... իմացեք, որ Տաշնակցության կամքը կամք է, խոսքը՝ խոսք...

Հետո ոչխարներ, գառներ, հավեր մորթվեցին, և բազմատանջ խումբը վանքի ծառապատ այգում նստեց ճաշի։

Ես մոտեցա քեռուս և բռնեցի նրա փեշից։

— Տիգրան աղա, դո՞ր ի էն խռանը։

Նա սիրով կամթեց իմ թուշը և ասաց.

— Գնա, Իշխանը կասի,— և ժպտալով նայեց Իշխանին։

— Հը, Գուրգեն, ի՞նչ կա... ե՛կ ինձ մոտ։

Ես նեղքին դժկամությամբ մոտեցա նրան, դեռ ծեծվող գյուղացու մղկտոցն ականջիցս դուրս չէր եկել։

— Խռան դո՞ր ի,— գրեթե շշունջով հարցրի ես։

Նա բերանը մոտեցրեց ականջիս և փսփսաց։

— Նռան, այ, էն մառգն սպանեց...— Եվ ցույց տվեց Կոճա Դավոյին։

— Ինչի՞,— հարցրի ես սարսափահար։

— Մատնիչ է ռ, —եզավ պատասխանը։

— Ասուած կպատժի ինոր,— հաստատ հավատքով ասացի ես։

— Ասուած չկա,— պատասխանեց նա և բարձր ծիծաղեց։

Տատս նեղս ու դուրս էր անում և չէր դադարում կոմիտեին անիծելուց։

— Մայրիկ,— կանչեց Արամը,— դու հնչա՞կ ես, դաշնա՞կ, թե՞ արմենական...

— Իրեքն էլ խո՛ղ,— պատասխանեց տատս և առանց նայելու նրա երեսին՝ հեռացավ։

Խումբն ուրախ ծիծաղեց։

Իջավ վանքի կապույտ իրիկունը, և ծառերի կատարներն օրորվեցին։

7. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Իմ հորեղբայրը՝ Պանտիշը (նրա մասին ես կգրեմ մի ուրիշ անգամ, որովհետև նա բացառիկ հետաքրքիր անձնավորություն է), արմենական էր, արմենականներ էին նաև

մեր պրացիները։ Նրանց տղաներն իրենց հայրերի օրինակով իրենց «արմենական»-ներ էին համարում։ Մեր թաղի մանուկների միասնական ճակատը ևս խախտեցի անկախ իմ կամքից, որովհետև քեռանց տան մթնոլորտից ամեն անգամ ևս տուն էի վերադառնում ավելի և ավելի «զարգացած»։ Մեր թաղի մանկական մասսան՝ Վարդանիկ, Ռատանիկ, Գառնիկ, Հրեշքորա՝ Պանտիչի տղաներն ու նրա դաղափարակից ժառանգորդները, Հրանտ, Երվանդ՝ մյուս կողմից, Տրդատ, Միհրդատ՝ երրորդ կողմից, Սուրեն, Խորեն, Վազգեն՝ սրանք էլ ուրիշ մի ֆրոնտից կազմում էին անհողդողդ արմենականների առաջավոր ջոկատը. չմոռանանք ասել, որ վերև հիշված անուններից նույնահնչյուն վերջավորություն ունեցողները եղբայրներ էին ընտրել որքան հնարավոր է նույնահնչյուն անուններ,— այս ամեն մի ծնողի մտահոգություն էր.— այսպես նաև կային քույրեր՝ Թագուհի, Մաքրուհի, Սրբուհի, կամ նորից քույրեր՝ Մայիս, Ալիս, Իրիս... Հայկանուշ, Վարդանուշ, Միրանուշ... կամ սրբերի անուններով՝ Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ, Հովհաննես, Մկրտիչ... իսկ երբ առաջին անգամ վանում խաղացին «Հին աստվածները», որոշները լցվեցին լացող Սեղաններով...

Այն տարին ևս վանքից վերադարձա հույժ «զարգացած»։ Հանդիպեցի իմ ընկերներին և կարոտի ածուի թմբերի վրա նստոտած՝ ես տվի իմ բացօթյա դեկուցումը Իշխանի թթության մասին, մեկը շինելով տասը։ Մոքերի փոխանակության ժամանակ Վարդանն այն կարծիքը հայտնեց, որ ամբավար Սեպուհը պակաս քաջ չէ, և եթե Իշխանն ու Սեպուհը «պյուլաշ բռնեն, անկասկած Սեպուհն Իշխանին «կդրխկացնի». իմ պատասխանում ես փչեցի այն միտքը թե՝ իմ նիրկայությամբ քսան հոգի թափվեցին Իշխանի վրա, Իշխանը հկույթով նրանց գետին գցեց։ Ակտիվ հակադաշնակցական Վարդանը խորին համոզմունքով հայտարարեց.

— Աստված որ ուզի, Իշխանին ձմերուվ կդարձնի...

— Աստված խո արմենական չի՞...

Նրանք ծիծաղեցին իմ տգիտության վրա. մի քանի անհերքելի փաստերով ապացուցեցին.... որ աստվածը թունդ արմենական է։

Մի րոպե, և միտքս լուսավորվեց.

— Աստված չկա,— արհամարհանքով ասացի ես և կեղծ հանգստությամբ ոտքի կանգնեցի։ Այս աղետավոր լոզունգն ամպրոպաղղորդ ազդեցություն թողեց փոքրիկ ժողովականների վրա։ Սկսեցին առարկել և հայհոյել։ Երվանդը դիսկուսիոն կարդով այն կարծիքը հայտնեց, որ հարկավոր է ինձ մի լավ ծեծել. այս կարծիքն արժանացավ ընդհանուր հավանության, և մինչդեռ նրանք պատրաստվում էին խոսքից գործի անցնելու, ես տուն փախա։

Այդ օրվանից ես ենթարկվեցի տնային բանտարկության. դուրս չէի կարող գալ, որովհետև նախկին ընկերներս փայտերը ձեռներին շրջում էին քակում և պատշգամբում, իրենց մտադրությունը գլուխ բերելու համար։ Այդ դեռ բավական չէ. այդ մութ ուժերը եղելության մասին տեղեկացրել էին «բարձրագույն իշխանությանը». նրանք գնացել, իրենց մայրերին պատմել էին իմ հակակրոնական ելույթի մասին, նրանք էլ ջոկ-ջոկ բռնել էին մորս և նրան պատմել. արդյունքն այն եղավ, որ Անուշը մասամբ իրագործեց հակառակորդների ծրագիրը։

Բայց հակառակորդներս չէին հանգստացել. նրանք շարունակում էին նույն եռանդով հետապնդել ինձ։ Վերջապես մի օր էլ, համբերությունները հատած, եկան փայտերով զինված և պաշարեցին սենյակը, նրանց մեջ նաև եղբայրներս՝ Սուրենն ու Խորենը, որոնք ուզում էին միջնորդություն հարուցել ներումն ձեռք բերելու համար... բայց իզուր... իմ հակառակորդներն անդրդվելի մնացին։

— Գուրգեն Աճեմյան, դուրս արա, թե չէ՝ պատուհանները կխակենք,— լսվեց Արմենակ Եղարյանի ուղղափառ որդի, չար և կռվարար Գուրգեն Եղարյանի սուր ձայնը։

Իմ դրությունն աննախանձելի էր։

Վտանգի րոպեին մարդս հնարագետ է դառնում, ո՛ւր մնաց... հեղափոխականը... Ես բացի մայրիկիս օժիտի սընդուկը, հանեցի այնտեղից հայրիկիցս մնացած անփամփուշտ ատրճանակը, բացի «սալոն»-ի վրա նայող պատուհանը (որի տակ խռնվել էին հակառակորդներս), դուրս պարզեցի ատրճանակի փողը և սարսափահար գոռացի.

— Փախեք, թե չէ՝ կկռակեմ...

Սարսափելու ես կրկնակի պատճառ ունեի. նախ նրանք կարող էին բռնել ատրճանակի փողից և խլել, երկրորդ՝ ինձ թվաց մի րոպե, որ իսկապես, եթե նրանք չփախչեն, ես «կկռակեմ» և վայ թե իմ կրակելուց ես ավելի վախենամ, քան թշնամիներս...

Բայց իմ ելույթը շշմեցուցիչ ազդեցություն թողեց. խումբը զարհուրած ճչաց և սանդուղքներից խուճապով լցվեց ներքև... Հաղթանակը կատարյալ էր և էֆեկտը մեծ։ Զանցած կես ժամ, մի պատգամավորություն եկավ և ինձ խնդրեց գուրս։ ես նրանց, հակառակ իմ աթեիստական «համոզմունքներինս», երդվեցրի Վարագա սուրբ Նշանի անունով առ այն, որ չեն դիպչի ինձ, որից հետո դուրս եկա։ Պատգամավորությունը խմբի անունից հայտնեց, որ ես հրավիրվում եմ խմբապետ ամբողջ խմբի, միաժամանակ հաղորդելով, որ խումբը ցանկալի է համարում, որ այսուհետև մեր մեջ չլինի ոչ մի խոսակցություն աստծու գոյության կամ չգոյության մասին...

Համաձայնությունը կայացավ. ես հինգ րոպե հետո անցա պարտականություններիս կատարմանը և ստանձնեցի գործերը, որոնք բաղկանում էին 12 տղաներից՝ 8—10 տարեկան, և նույնքան էլ ձեռնափայտերից. վերջիններն իրենցից ներկայացնում էին մեր ահարկու խմբի բոլանդակ ռազմական արսենալը։

Ավելորդ է հիշեցնել, որ խմբիս նպատակն էր «ջարդել Թուրքերին և ստեղծել իսկական Հայաստան»։

Ըստ երևույթին ամենայն ինչ կատարյալ էր, և գործն առանց տատանումների առաջ կգնար, բայց ահա մի անգամ խմբի անդամներից մեկը հարց տվեց ինձ այն մասին, թե ո՞րտեղից եմ ձեռք բերել ատրճանակը։

— Իշխանը տվեց...— փչեցի ես առանց մտածելու իմ հայտարարության քաղաքական աղետալոր հետևանքների մասին։

Խումբը քրթմնջալ սկսեց. իմ զինվորներից չորս հոգի մինչև անգամ գաղտնի նիստ էին գումարել վարդնոցի տակ

և եկել էին այն եղրակացության, որ հարկավոր չէ այն Հայաստանը, որը ձեռք պիտի բերվի դաշնակցական Իշխանի ատրճանակով, քանի որ իմ մարտիկները նվիրված արմենականներ էին... Սակայն ես գտա իմ պաշտպանները. նրանց հաջողվել էր ճնշել շորսի օպոզիցիան, առարկելով, որ առայժմ անհրաժեշտ է օգտագործել ինձ, որպես ատրճանակ ունեցողի, իսկ հետագայում, երբ կիրագործվի գերագույն նպատակը, հեշտ կլինի հրաժարվել և՛ Իշխանի ատրճանակից և թե, նամանավանդ, նրա կրողից...

...Տխրությամբ է լցվում սիրտս, սիրելի ընթերցող, այս ամենը հիշելիս։ Բարձրանում էր, հիրավի, թունավոր ծաղիկների մի սերունդ՝ զոհ տիրող մի ամբողջ մտայնության։ Իմ մանկության ընկերներից նրանք, որոնք մնացին, ակամա եղան պատմական մեծագույն դեպքերի. նրանցից շատերը հիմա ապրում են ուրիշ արևի տակ և զբաղվում ուրիշ նպատակներով։ Եվ ամեն անգամ, երբ ես տեսնում եմ կարմիր փողկապներով զարդարված պիոներական զվարթ դեմքեր, իմ դեմ ելնում է իմ մանկության մռայլ տվերը։— Աճե՛ք և ժպտացե՛ք, —ասում եմ ես մտքումս նրանց,— պայծառ է ձեր երթը, ավելի պայծառ ձեր ճանապարհը. հիմա ես էլ եմ ապրում ձեզ հետ և կրում ձեր պայծառ իմաստությունը, չնայած, որ իմ մանկության օրերին ինձ վիճակված էր ապրել դեղին զառանցանքում և շնչել թունավոր խաշխաշներ։

8. ԱՂՋԻԿԸ

— Նապելի...

Նապելի էր կոչվում 12 տարեկան այն աղջիկը։

Նրանց տունը գտնվում էր ուղիղ մեր տան դիմացը. նրանք հաշվվում էին մեր քաղաքի երրորդ կամ չորրորդ հարուստները։

Նրանք եղբայրներ էին և ապրում էին միևնույն (մեր քաղաքի համեմատությամբ) ապարանքում։

Կախարդական մի խորհուրդ ուներ նրանց տան յուրաքանչյուր մատնիկը. բակում սոսափում էին երկու խնձորենիներ, որոնք թեքվել էին տան առաջին մասում կառուցված տանիքի վրա՝ խնձորներով ծանրացած։ Մաղկանոցներով զարդարված էր նրանց բակը։ Ունեին խանութներ և սեփական կառք։

Եվ ահա ես որոշեցի նրանց աղջկա՝ Նազելիի հետ և միայն Նազելիի հետ ամուսնանալ։

Իմ մտադրությունը գլուխ բերելու համար ես ոչ ոքի հետ չխորհրդակցեցի, քանի որ չունեի համապատասխան ընկերներ. ավելի շուտ այդ ուղղությամբ ես հարմար էի գտնում Իշխանից խորհուրդ հարցնել, քան իմ զինվորներից որևէ մեկից, որովհետև ես արդեն սկսել էի հավատալ իմ փշած տոմն, բան որի Իշխանն ինձ նվիրաբերել էր իր ատրճանակը, և ես մեծահոգությամբ չէի մերժել... Ահա թե ինչու ես իմ ուժանոտությունից ցած գործ էի համարում Նազելիի հետ ամուսնանալու հարցը քննության դնել իմ հասակակիցների, բայց արտաքին էությանս իմ ատրադրյալների առաջ, որոնք վրա իշխում էր մի ատրճանակ առանց փամփուշտների՝ հանված մայրիկիս օժիտի անդուկից...

Այնուհետև, երբ ամեն անգամ տատս նույն գորովով իմ տատնհինգ տարեկան դառնալու և ամուսնացնելու մասին էր հուշում, կարծես զեղեցկահասակ բարդու ծառի Մեխենների խշշոցի միջից ելնում էր և կանչում նա՛, Նազելին, կարմրշրջապտույտով և արծաթահունչ ձայնով։ Ինձ մնում էր խնդրել նրա ձեռքը և որովհետև այն ժամանակ ես դեռ չգիտեի, որ աղջկա ձեռքը խնդրելու համար հարկավոր էր դիմել ծնողներին, ուստի անմիջապես դիմեցի նրան։

Այդ պատահեց այսպես.

Նազելին ինձ հայտնեց, որ իրենց ջուրն ավելի լավ է, որովհետև ջրհորը խորն է ավելի։ Իմ ինքնասիրությանը դիպավ այն հանգամանքը, որ նրանք՝ Նազելիենք, բավական չէ, որ ունեն շքեղ տներ և հարստություն, դեռ ջուրն էլ պիտի ունենան մեզնից լավ, ջուր, որ ոչ թե փողով է ձեռք բերվում, կամ հարստությամբ, այլ տված է բոլորին անխտիր,

հարուստին և աղքատին։ Երբ նա նրան հակաճառեցի, նա՝ Նազելին, ինձ հրավիրեց իրենց բակը։

— Արի,— ասաց նա, իսկ նրա այտերին գոյացան փոքրիկ փոսիկներ,— արի, տես, ինչ խոր է մեր խորը։

Ես գնացի։

Մոտենալով ջրհորին՝ նա ուժով մի կողմ հրեց նրա փայտե կափարիչը, պառկեց սալաքարերի վրա, գլուխը կախեց հորի մեջ և հրավիրեց ինձ նույնն անելու։

— Թքի խորի մեջ,— ասաց նա,— տես, ինչ ուշ կը խասնի ջրին...

Հետո, հորի հատակում, հստակ ջրի հայելում, ես տեսնում էի իմ գլուխն ու Նազելու գլուխը կողք-կողքի և զարմանալի ներդաշնակ. իսկ երբ նա իմ փոխարեն թքեց հորի մեջ, մի րոպե կարծես ջարդվեց հայելին, ջուրը խառնվեց, հինգ րոպե հետո ընդունելով նախկին պայծառ խաղաղությունը։ Այդ հինգ րոպեի ընթացքում ես մտածում էի հոր մաքրողների մասին (մեզանում նրանք կոչվում էին քանքաններ). նրանք հավատացնում էին, որ օրը ցերեկով հորի տակից տեսնվում են աստղեր, իսկական աստղեր, ինչպես դիշերով... Ախ, իսկ չի՞ կարելի ելնել հորի հատակում և տեսնել ցերեկով աստղեր... գոնե մի անգամ...

Երբ հորի հատակի ջուրն ստացավ իր նախկին պայծառ խաղաղությունը, և երբ նրա հայելում երևացին նորից երկու մանկական գլխիկները, ես դադարեցի ցերեկով աստղեր տեսնելու մասին մտածելուց և ասացի Նազելուն.

— Արե մեյտեղ պսակվե՞նք...

Նա բարձր ծիծաղեց հորի մեջ և՝

— Ես Իշխանի հետ կպսակվեմ,— հայտնեց նա...

Ատելության պես մի բան շարժվեց կրծքիս տակ...

— Իշխան ատրճանակ է տվե ձի...

— Էլ ունի... համ էլ ձեր տուն խորոտ չի...

— Է, լավ,— ասացի ես կնոջ հանգստությամբ ոտքի կանգնելով,— ես էլ կերթամ Իշխանի մոտ... ինոր հետ կուզամ ձեր տուն կվառենք... ձեր ֆայտոնն էլ, ձիերն էլ, ջրի հորն էլ... համեն կը վառենք։

— Է,— ասաց նա ոտքի կանգնելով,— Իշխանն իմ խոր դուստն է...

— Սո՞ւտ...— ասացի ես, ներքուստ ավելի քան հավատալով սարսափելի լուրի ճշտությանը։

— Չէ՛, դու ասա,— նյութը փոխեց Նազելին,— որ պսակվեն, ի՞նչ կանեն...

Ես այդ մասին չէի մտածել, բայց շուզեցի տգետ դուրս գալ, ուստի ասացի.

— Ասենք թե ես դու պսակ...

— Չէ,— ոտքը դեռնին խփեց Նազելին,— ես ու դու չէ, ես ու Իշխան...

— Լավ... ասենք դու և Իշխան պսակվեցիք... դու պիտի Իշխանի շամաշուրնները լվաս... համ էլ...

— Չես գիտե, շես գիտե,— վճռեց Նազելին,— այ, համ էլ կուզես պսակվել... որ պսակվենք, ես, Իշխան, գիշերով կերթանք աղբյուր ու... տղա կպիրենք... այ, հայրիկն ու մայրիկը մի ամիս առաջ գնացին աղբյուր և ձի համար ախպեր պիրին։

Է՛, — բմծիծաղ տվի ես ներքուստ նախանձելով Նազելու դիտական պաշարին,— ապա ի՞նչխա չի խեղդվե ջրի մեջ...

— Ինչի՞ պիտի խեղդվի... Մենք էլ աղբյուրից ենք դուրս իկել, բա ինչի՞ չենք խեղդվել... Համ էլ, որ ասուված պահ ինչի՞ պիտի խեղդվի...

— Ասուված չկա,— հանդիսավորությամբ հայտարարեցի ես, վերջապես ուրախանալով, որ առիթ է ներկայանում ցնցել Նազելին։

— Սո՞ւս,— ծղրտաց Նազելին և գնդակի պես ներս փախավ, թողնելով ինձ բերանբաց, բերանը բաց ջրհորի մոտ։

Ես թեքվեցի ջրհորի վրա և նրա հայելում տեսա իմ մենակ, մերժված, որբացած գլուխը...

. . . . . .

. . . . . .

Նրանից հետո՝

Ես շատ սիրեցի և շատերին,
Դահիճ եղա ոմանց ու ոմանց զոհ,

Ինձ մեզմ օրորեց փշատենին,
Ու ջուրը հրպեց քաղցր ու գոհ...

Բայց երբե՛ք, երբե՛ք ինձ այնքան բախտավոր չեմ զգացել, որքան այդ օրը, ջրհորի մոտ, Նաղելիի հետ և երբեք, երբեք այնքան չեմ դառնացել, որքան այդ օրը, ջրհորի մոտ, երբ Նաղելին նեղս փախավ և ինձ թողեց մեն-մենակ, ջրհորի մոտ, ջրհորի մոտ...

9. ԿԻՆԸ

Վանքն է, նրա տակ բլուրը, նրա տակ գետը։

Եղբայրներիս հետ, վանքի ծառայողների երեխաների հետ գետ էինք գնում լողանալու։ Կային նրանց մեջ երկու փոքրիկ աղջիկներ, երկու քույրեր՝ Նանիկ և Թուրո։

Նրանք էլ մեզ հետ լողանում էին, օգտվելով այն ազատությունից, որից հավասարաբար օգտվում էինք բոլորս։ Եվ չկար ոչինչ խորթ, չկար ոչ մի կասկած առ այն, որ մենք տարբեր արարածներ ենք և որ տարիներ հետո միմյանց ներկայությամբ լողանալը կապված կլիներ տիեզերական դժվարությունների հետ...

Մի անգամ Հարոն ասաց.

— Էսօր Թուրոյին տանենք կամրջի տակ...

— Ինչի՞,— հարցրի ես, զգալով մի տեսակ անհանգիստություն։

— Հեչ, լողանանք,— ասաց նա անփույթ եղանակով։

— Ես կամրջի տակ չեմ ուզե,— ասացի ես։

— Որ էդպես ի,— շշնջալով ասաց նա,— ես կտանեմ... բայց դու մարդու չասես...

Այլևս ոչինչ չհարցրի. ես չհարցրի, թե ի՞նչ կլինի կամրջի տակ Թուրոյի հետ լողանալով և թե ինչո՛ւ այդ մասին ոչ ոքի չպիտի հայտնել, այնքա՞ն խորհրդավոր, այնքա՞ն հետաքրքիր թվաց ինձ այդ ամենը...

Ահա և գետակը։ Հարոն սկսեց հանվել կամրջի մոտ, մենք բոլորս՝ տասը քայլ հեռու։ Սառը ջրի առաջին սարսուռն անցավ, և մենք սկսեցինք աղմկելով լողանալ։

Հարոն առաջացավ դեպի մեր խումբը և դիմեց ինձ.

— Արի էրթանք կամրջի տակ, էնտեղ ջուր տաք է՛, ավազ է... էրթանք, Թուրո...

Նա բռնեց իմ և Թուրոյի ձեռները, ու երբ մի քանի քայլ արել էինք, Հարոն բաց թողեց իմ ձեռքը և Թուրոյի հետ առաջ անցան։

Ես ետ փախա դեպի խումբը։

— Շատ փոս է՛, չըմ ուզի՛,— լսվեց Թուրոյի զանգատավոր ձայնը։

— Մի վախի, պոնիր եմ,— քաջալերում էր Հարոն։

Ես ետ նայեցի. Թուրոն մինչև կուրծքը, իսկ Հարոն մինչև մեջքը թաղված էին ջրի մեջ. Հարոն բռնել էր նրան, ու նրա այրերն անհանգստությունից վառվում էին։ Հետո նա նետվեց ջրի հոսանքով և Թուրոյին էլ քաշեց հետը. մի րոպե, և Թուրոն դուրս փախավ գետակից ու գետափով վազեց դեպի խումբը։

— Շան լա՛ճ,— հևասպառ արտասանեց նա Հարոյի հասցեին,— քիչ մնաց խնդդ.... խնդդվի...

Երբ լողանալուց հետո բարձրանում էինք բլուրը, Հարոն լուռ էր. նա ոչ մի խոսք չասաց ամբողջ ճանապարհին. ինձ պատկերել էր մի տագնապալի անհանգստություն։

. . . . . .

. . . . . .

Այդ գիշեր ես երազ տեսա։

...Թուրոն մոտեցավ ինձ և ասաց.

— Արի մենակ էրթանք լողանք։

Մենք գնացինք։

— Իմ շորեր գո՛ւ հան։

Ես սկսեցի հանել նրա շորերը և ինչքան հանում էի, չէր վերջանում։ Մեկ, երկու, չորս, յոթ...

— Ո՞ր պիտի պրծնի, Թուրո... մութ կէլնի...

— Մութն է,— ասաց Թուրոն,— չե՞ս տեսնա... աստղերն լան... էս մեկն էլ հան... էս մեկն էլ հան... ահա պրծավ։ Արի լողանանք... պառկենք ավազի վերեն։

Մենք պառկում ենք ավազի վրա։

— Ես կմանամ,— ասում է Թուրոն,— ծածկի՛...

— Ահանչ...

Թուրոն ասում է.

— Էապես լավ է...

...Ես զարթնում եմ. զգում եմ, որ ժպտում եմ։ Չեմ ուզում աչքս բանալ. ախ, երևի հրեշտակների երազն այսպես քաղցր կլինի, հրեշտակի երազ տեսա ես...

Բաց եմ անում աչքերս։

Վանքի մեծաշուրջ առավոտը։

. . . . . .

...Քաղաքից հյուրեր եկան վանքը. բարեկամներ ու բարեկամուհիներ. նրանց մեջ Մարմարը, բարձրահասակ և հսկա մի աղջիկ, մուգ-կապույտ աչքերով, երկար թարթիչներով, աջ այտի վրա մի փոքրիկ, սև խալ։

Մարմարը զրկեց ինձ, բարձրացրեց վերը, չա՛փշո՛ւփ համբուրեց և երբ փորձեց կծել, ես հակառակ իմ սովորությանն, չխուսափեցի. միայն թե նա, այդ օրիորդ Մարմարը, ինձ չիջեցնի վար։

— Դե, մի անխամանա... նաֆաս կտրալ ազի,— պաշտպանեց ինձ տատս։

Մարմարը վար դրեց ինձ և հյուրերի հետ դուրս եկավ վանքի բաժինները տեսնելու։

Տատն եկեղեցին. խաչակնքեցին երևաններն ու լուռ կանգնեցին. ես նայեցի ասուածամոր պատկերին, հետո Մարմարին. այնքան խե՜ղճ թվաց ինձ ասուածամոր պատկերը, այնքան տխո՜ւր, խունացա՜ծ... նրա տխրությունը ցավ չպատճառեց ինձ. ես զգացի արգահատանքի, թե արհամարհանքի պես մի բան։

— Իսկապես ասուածամայրն էապես կելնի.— մտածեցի ես՝ նայելով Մարմարի գեղեցիկ դեմքին։

Ես բռնեցի Մարմարի փեշից, և մենք դուրս եկանք վանքից։

Երեկոյան ընթրիքից հետո ես պառկեցի քնելու. հյուրերը երկար զբաղվեցին. իսկ իմ քունը չէր տանում. ես չքնեցի, մինչև Մարմարն սկսեց հանվել, իսկ երբ նա սկսեց հանվել, ես գլուխս կոխեցի վերմակի տակ. շունչս տաքացել էր, ու սիրտս արագ էր խփում։

Այդ գիշեր ես երկրորդ անգամ տեսա սպիտակ հրեշտակի կապույտ երազը։

Ես սկսեցի նկատել, որ կանայք շնչում են...

10. ԼՈՔՈՆ

Ինչո՞ւ տխրեց սիրտս... Ես գիտեմ ինչու... Լոքոյին հիշեցի ես...

Երկար ոտներով, կարճ իրանով, անսովոր մեծ գլխով, նա կես-գիշերից անց, երբ ողջ քաղաքը քնած էր լինում, առնում էր կոշնակը, «թխկըլ-թխկըլ» խփելով անցնում էր թաղից թաղ, կանգնում էր յուրաքանչյուր դռան վրա, խփում էր դուռն ճկիկը— «չըխկ-չըխկ-չըխկ» —ու հեռանում էր, իր կոշնակի խաղաղ ձայնի հետ։ Այն անները, որոնք գիշերով հաց էին թխում, թագա հաց էին տալիս նրան այն ժամանակ, երբ ժամհար Լոքոն հասնում էր նրանց դռանը։

Երբ պատիս էին մայրիկանց տան հաց թխելու օրերը, ես լցվում էի անհամբերությամբ և ուրախությամբ. մեր հացթուխը մոտ քառասուն տարեկան սև-սև մի կին էր, ուրախ, կմախքոտ, առանձների և արախուսությունների մի անսպառ ջանմարան։

Բնյոլին (չէ՞ որ նա այսպես էր կոչվում...) կառներ բացված լայնաշալ «մատրակի» վրա, կկռանար մինչև շիկացած թոնրի խորքը, վարժ ձեռներով կխփեր թոնրի կողքին և դաստակվող մատրական դուրս կքաշեր... մեկ էլ տեսար սկսեց իր անդիր շարահյուսությունները.

Թագա հացի հոտ կուգա,
Ելեք, տեսեք, վո՞վ կուգա։
Երեք ձիավոր կուգա,
Մե՛յն ի Հիսուս,
Մեյն ի Քրիստոս,
Մեյն Վարագա
Սապարաժին...

Ձեռ էր առնում Բնյոլադեն. Հիսուսը ջոկ մարդ էր նրա համար, Քրիստոսը՝ ջոկ։ Անկարելի էր լսել մի լուրջ խոսք

նրանից, նրա աղոթքներն անգամ հումորիստական էին, երբ լույսը կսկսեր բացվել, նա լրջության մի կեղծ հառաչանք բաց կթողներ և որպես թե կաղոթեր.

Բարի լուսու սիրուն Քրիստոս,
Գունգրամ փոխինդ թալ իմ դոգս,
Թալեմ բերանս, երթա փորս...

Տատս վեր էր կենում և փոխինդ էր շաղախում...

Իսկ երբ ժամհարը մոտենում էր մեր դռներին, տատս փաթաթում էր երկու-երեք տաք լավաշ և տալիս էր ինձ։ Ես վազում էի, բաց էի անում փողոցի դուռը և, ուրախությունից ու հուզմունքից առանց մի խոսք արտասանել կարողանալու, պարզում էի Լոքոյին լավաշի տաք փաթեթը...

— Աստված ձեր մեկն խաղար անի,— ասում էր Լոքոն ու, «տընգլ-տընգլ» կոշնակը խփելով, հեռանում էր, թողնելով ինձ կախարդված դրության մեջ...

Ժամհարի գալն ինձ վրա թողնում էր այն աստիճանի միստիկական տպավորություն, որ ես առաջին շրջանում վախենում էի մենակ գնալ և դուռը բաց անել։

— Իմ Գուրիսի հետ էրթանք, հա՛ց տանք ժամհարին,— երգեցիկ ձայնով ասում էր տատս, առնում էր լավաշը և ընկնում էր առաջ։ Երբ նա դուռը բաց էր անում, ես դռան կիսաբաց ճեղքից միայն նայում էի ժամհարին ու տեսնում էի նրան լուսնի տակ, ածդահա՜ ժամհարին, երկար ոտներով, կարճ իրանով և անսովոր մեծ գլխով...

Կշկշում էր Բեյզադեն, ծիծաղում էր ու մազրական խփում էր ծունկին.

— Օղի՛կ, կասեն Լոքոն ծուռ Քինոյի սիրականն է...

Ծուռ Քինոն քսաներկու, քսաներեք տարեկան մի մուրացկան աղջիկ էր. նրան ծուռ, խենթ էին համարում ,որովհետև Քինոն սովորական մուրացկանների պես չէր մուրում։ Սովորական աղքատները խփում էին դուռն այնքան կամաց, որ տանեցիները «աղքատ է...» ասում էին և թողնում էին անհետևանք։ Բայց ավելի սովորական էր հետևյալ հարց ու պատասխանը— դուռը ծեծում են.

— էն վո՞վ է...

— Աղքատ ի...

— Ասուված տա...

Եվ աղքատը հեռանում էր։ Իսկ Քինոն դուռը ծեծում էր համարձակ և բարձր.

— Էն վո՞վ ի...

— Բա՛ց...

Դուռը բացվում է, նա առանց աջ ու ձախ նայելու ներս է մտնում, բակից անցնում է տանտուն, նստում է թոնրի վրա և...

— Ցուրտ ի... տայնամ, էրթամ...

Տատս բերում էր նրա համար ուտելիք. ուտում էր, տաքանում, երգում, շատախոսում... Մի անգամ էլ, երբ նա դուրս եկավ գնալու, դեռ բակը չանցած, դուռը ծեծեցին.

— Վո՞վ ի...— հչաց Քինոն։

— Աղքատ ի,— լսեց դրսից։

— Գնա՛, գնա՛,— ճղլթաց Քինոն,— ասուված տա...

Այսպես էր Քինոն։

Բեյզադեն շարունակում էր կշկշալ և պատմել տատիս, որ ամեն անգամ, երբ ինքը գնում է Դատաստաննից տուն հաց թխելու, լսում է, թե ինչպես ժամհար Լոքոն անցնում է Մեռելենց տան մոտով, հասնում է Բոդ-բոխկենց տանը, ու կոչնակը լռում է. Բոդ-բոխկենց տան մոտ մի դուռ կա, որը գիշեր-ցերեկ բաց է. այնտեղ է ապրում Քինոն. կես ժամ հետո միայն վերատին լսվում է ժամհար Լոքոյի կոչնակի ձայնը...

— Քինոյի մոտ կերթա-կուգա, Օղի՛կ, Քինոյի մոտ։

— Ինոնց մեղք՝ ինոնց վիզ,— ասում է տատս և խմորից գնդեր է շինում։

Մի օր էլ լուր տարածվեց, որ ժամհար Լոքոյին և Քինոյին գտել են վերջինիս խրճիթում ,անկողնու մեջ, մորթված, միասին պառկած...

— Մըդրըքներն են արե...

«Մըդրըքները»— գնչուներն էին։

Լոքոյին հաջորդեց մեր դրացի Սիմոնը, որին ամեն օր, օրը ցերեկով տեսնում էի. այս հանգամանքը նսեմացրեց իմ

մեջ ամեն միստիկա դեպի ժամհարի դիշերային շրջագայությունը, դեպի նրա կոշնակի խաղաղ ձայնը...

Ես ժամհար Լոքոյին մոռանալ չեմ կարող։

. . . . . .

... Այգեստաններին վրա բացվում էր առավոտը. բոլոր երդիկներից ծուխ էր բարձրանում ու կապույտ ամպանում. հոսող առուների վրա խշխշում էին ուռենիներն ու բարձրահասակ բարդիները։ Մանկահասակ աղջիկները ջուր էին ցանում այգու և փողոցի դռների առաջ, ավլում էին ու աչքի տակով նայում անցնող-դարձողներին։ Արարուց եկեղեցու զանգը կանչում էր աշակերտներին Արարուց դպրոց, Նորաշենինը՝ Նորաշենի, Հանկույսձորինը՝ Հանկույսձորի։ Սկսվում էր ամենօրյա առօրյան, բացվում էին խանութները, սրճարանները, վարսավիրանոցները։ Բարձր հաղալով՝ Մուխտարն նստում էր իր սպիտակ իշու վրա և, ոտներն օրորելով, ուղևորվում դեպի քաղաք։ Արթնանում էին հոգսեր, ցանկություններ, մտահոգություններ, ուրախություններ, անհաջողության ցավեր... Ու երկաթուղուց հարյուրավոր վերստերով հեռու ապրում էր, զգում, ուրախանում ու տխրում էր տափակ կտուրներով ու ծառերի մեջ տարածված գեղեցիկ մի քաղաք...

11. ՄԻ «ԱԼԱՖՐԱՆԿԱ» ԸՆՏԱՆԻՔ

Մեր քաղաքը բաժանված էր երկու մասի՝ քաղաք և Այգեստան։ Քաղաքը նշանավոր էր իր պատմական բերդով, իսկ Այգեստանը՝ իր զովաշունչ և խիտ այգիներով։ Մենք ապրում էինք Այգեստանում, բայց ահա տատիս եղբայրը՝ Սիմոն աղան, ապրում էր քաղաքում։

Մի անգամ տատիս հետ միասին գնացինք Սիմոն աղայենց տուն։ Ճանապարհն ինձ համար շափազանց երկար էր և հոգնեցուցիչ։ Դրա համար էլ երևի տատս ամբողջ ճանապարհին ինձ պատմեց զանազան պատմություններ, բացի «Ջամբիլ-Ֆրոշիցա», որովհետև վերջինս բացի պատմողական լինելուց, ուներ նաև երգելու տեղեր, իսկ փողոցում տատիս համար երգելն այնքան էլ հարմար բան չէր... Անցանք խաչ-փո-

զանը, համամները, մարքաղը, Հայկավանքի եկեղեցին և մեր դեմ կանգնեց բերդն ու քաղաքի դուռը։ Երբ մոտեցանք քաղաքին, տատս այնքան ոգևորվեց, որ առանց այլևայլության սկսեց երգել «Զամբիլ-Ֆրոշից», առանց տեքստը պատմելու։ Մենք մոտանք քաղաքի դռնով, անցանք երկու փողոց և կանգնեցինք երկհարկանի մի տան առաջ։

... Սիմոն աղան մի սև-սև, բարձրահասակ, մոտ 33 տարեկան մարդ էր։ Նրա կինը՝ Անիկ դուդուն, կռացավ, համբուրեց ինձ և, ձեռքիցս բռնելով, ներկայացրեց Սիմոն աղային։ Նա կամթեց ֆուշս, ինչ-որ սիրալիր բան ասաց և տարավ ինձ իր տղաների մոտ։ Երկու տղա ուներ նա,— Հայրիկ և Հայկակ,— և մի փոքր աղջիկ՝ Շնորհիկ։ Մենք շատ շուտ մտերմացանք և սկսեցինք դրաղվել զանազան մանկական խաղերով։ Ճաշի ժամանակ մենք բոլորեցինք սեղանի շուրջը։ Մեծ եղավ իմ զարմանքը, երբ ես տեսա, որ փոխանակ ծալապատիկ նստելու վարդիր սինու շուրջը, մենք բոլորեցինք աթոռներով շրջապատված մի սեղանի շուրջ։ Ես ստիպված եղա բարձրանալ և կանգնել ինձ հատկացված աթոռի վրա, սեղանի անցուդարձերին անմիջականորեն վերահասու լինելու համար...

Բայց ավելի մեծ եղավ իմ զարմանքը, երբ ուտել սկսելուց առաջ բոլորը միասին անխոս կանգնեցին ոտքի, աչքերը փակեցին, իսկ Սիմոն աղան սկսեց մի աղոթք։ Տարօրինակ և ծիծաղելի թվաց ինձ՝ աղոթելու այդ ձևը, ավելի ծիծաղելի թվաց ինձ այն, որ փոքրիկ Շնորհիկը աչքերը լրիվ չէր փակել և, միայն ինձ համար նկատելի կերպով, կիսաբաց աչքերով նայում էր սեղանի բարիքներին։

Ես արդեն պատրաստվել էի բարձրաձայն ծիծաղել, բայց բարեբախտաբար վերջացավ աղոթքը, և բոլորն էլ սկսեցին լուռ ուտել։ Մինչև ճաշի վերջը ոչ ոք ոչ մի խոսք չասաց։ Իմ և տատիս մեջ միայն տեղի ունեցավ մի փոքրիկ բաց յատրություն։

— Ինչի՞ սինի չկա,— հարցրի ես տատիս ականջին շշուկով։

— Իսոնք ալաֆրանկա են,— պատասխանեց տատս։

— Ինչի՞ աչքեր խփեցին,— նորից հարցրի ես։

— Փոսդ ևն,— նշալ պատասխանել։

Ամենլարդ է սակ, որ այս խոսակցությունը, որից, հիշատ սատ, ես քիչ բան հասկացա, բացի ինձանից և տատից, ոչ ոք չլսեց...

Երբ սեղանը մարեցին, Սիմոն աղան ասաց Անիկ դուդուին.

— Անիկ, մարսական բե՛ր...

Ես այդս չգիտեի, տեսանելու համար, թե ի՞նչ է այդ «մարսական»։ Կոչվածը Անիկ դուդուն սեղանի վրա դրեց Շուշանի խայտով, Երասանաս խնձոր և տրիշ մրգեր։ Ներանք, իսկ «մարսականը» չկար ու չկար։ Հետո նորից բոլորն էլ սորի կանգնեցին, փակեցին աչքերը. Սիմոն աղան մեծ հանդիսավորությամբ աղոթեց, իսկ Շնորհիկը այնպես պինդ էր փակել իր աչքերը, որ թվում էր, թե այլևս չպիտի բացվեն նրանք...

Հայրից հետո ես տատիս հարցրի.

— Ինչի՞ մարսական չպիրին...

Նա պատասխանեց, որ «մարսական» ասվածը խնձորն է. խայտողը և առհասարակ մրգերինը։

Երբինանեմին Սիմոն աղան հայտնեց, որ պետք է ժողովարան գնալ։ Հայրիկն ու Հայկակը շատ ուրախացան, որից ես եզրակացրի, որ ժողովարան կոչված տեղը վատ տեղ չպետք է լիներ։ Մենք հանապարհվեցինք։ Դա մի մեծ դահլիճ էր, բարձր ամբիոնով և բարձր առաստաղով։ Ինձ վրա մեծ տպավորություն թողեցին դահլիճի պատուհանների գույնզգույն ապակիները։ Դահլիճը լեցուն էր աղոթարարներով։ Մի բարձրահասակ մարդ մոտեցավ ամբիոնին, ինչ-որ խոսքեր ասաց, ապա լսվեց նվագարանի ձայն, որից հետո բոլորն էլ սորի կանգնեցին, փակեցին աչքերը և սկսեցին երգել։ Այդ երգի առաջին բառերը ես չեմ մոռացել.

«Անհույսին հույս, ո՛վ Հիսուս...»։

Շնորհիկն էլ էր երգում, բայց երբ ես ուշադրություն դարձրի, տեսա, որ նա ո՛չ թե երգում է, այլ «ա՜... ո՛...» ձայներ է հանում...

Ժողովարանը դրսից, և մենք ուղևորվեցինք դեպի տուն. հանապարհին ես և Հայկակը գնում էինք Անիկ դուդուի հետ,

իսկ տատս, Սիմոն աղան, Հայրիկն ու փոքրիկ Շնորհիկը մի քանի քայլ մեզնից առաջ էին գնում։ Մեր դիմաց մի մարդ օրորվելով և քթի տակ ինչ-որ երգելով գալիս էր։

— Սարխուշ ի...— ասաց Անիկ դուդուն՝ ամուր բռնելով մեր ձեռքից. մարդը ուղղակի մոտեցավ Անիկ դուդուին։

— Քյաֆուր վարդ,— ասաց անծանոթը, և մինչև նա ուշ-ուշ կգար, բերանով կպավ երեսին և— «պրոշչ»...

— Հայրի՛կ,— ճչաց Հայկակը,— մայրիկին համբուրեցի՞ն...

Սիմոն աղան ևս նայեց, իսկ Անիկ դուդուն կնոջպես պես կարմրած դեմքով շշնջաց.

— Պան չէլալ...— Զգիտեմ ինչո՞ւ, ինձ թվաց, որ նա դոհ էր պատա չածից։

Բայց ըստ երևույթին բանը բանից անցել էր. տուն հասանք, և Սիմոն աղան հիվանդացավ։

— Անուշիկ Հիսուս, ի՞նչ էլալ է մարդուն,— ասում էր Անիկ դուդուն և հուզված շրջում էր սենյակի լայնքով։

Սիմոն աղայի ցանկությամբ կանչվեց թե՛ որպես բժիշկ և թե՛ որպես խոստովանահայր պատվելին. այս այն մարդն էր, որը ժողովարանի ամբիոնից ապթենց և քարոզեց։

Պատվելին շիշ կուլ տված պես մտավ հիվանդի սենյակը, իսկ մենք մյուս սենյակում սպասում էինք հոգևոր կոնսիլիումի արդյունքին. քսան րոպե անց պատվելին երևաց դռների մեջ, աչքը փակեց, գլուխը հառնց առաստաղին և հանդիսավոր ձայնով արտասանեց.

— Հիսուսը կանչեր է եղբայր Սիմոնին, բսեր է՝ նկուր...

Ասաց ու հանդիսավոր քայլով դուրս նկավ։

— Կրոպի-մախու պրոուն,— ասաց նրա հետևից տատս,— մարդը նեղպրոպալ, պատկավ. ի՞նչ ավել-պակաս խոսենք...

Խշշաց անձրևը բերդի վրա, քաղաքի վրա, տանիքի կտուրների վրա։

Տատս դիագնոզը ճիշտ էր. Հիսուսը Սիմոն աղային չէր կանչել։

Վերջին անգամ տեսնում եմ նրանց Վանը թողնելիս։ Մենք գնացել էինք «կայարան» նրանց ճանապարհելու։ «Կայարան» կոչվածը՝ դա սկիզբն էր այն մեծ ճանապարհի, որ ձգվում էր Վանից մինչև Իզմիր. «կայարան»-ը կոչվում էր

«Վայ-վայ Թարլաբո»— մի անուն, որը ներդաշնակում էր տեղին, այնտեղ բառի իսկական իմաստով «վայ-վայ» էին անում տատս, Անուշը, Սիմոն աղան, Անիկը... նրանք լալիս էին և դամբարվում։

— Մայրիկ, ձիո՞վ կերթան Իռանատան...

— Չիով...— ասաց նա արցունքների միջից,— հետո շըմբնդրֆրտ կնատեն...

«Շըմբնդրֆրտ» կոչվածը գնացքն էր...

Երբ բոլորն էլ տեղավորվեցին իրենց ձիերի վրա, տատս ինձ գրկեց, բարձրացրեց Անիկ դուդուի ձիու վրա, Անիկ դուդուն ինձ համբուրեց, իսկ նրա գրկում նստած փոքրիկ Շնորհիկը քաշեց իմ մազերից. հետո տատս ինձ վար առավ նրանք ձիու վրա մի անգամ էլ փակեցին տատիկին, և Սիմոն աղան աղաչեց։ Սակայն այս անգամ փոքրիկ Շնորհիկը աչքը չէր փակել. նա նայում էր հարթավայրի վրայով ձգված սպիտակ ճանապարհին...

Ձիերը շարժվեցին։

...«Այսֆրանկաս ընտանիքից այսօր ապրում է միայն Հայկակը. նա 1918 թվին Մարսիլիա անցավ և այժմ զբաղվում է զատվելությամբ։ Հայրիկը Իռանատան հանձնարարեց որ հետո մահացավ. իմ տատը Լեռանդուն կերպով հաստատեց էր բոլորին, որ նա միայն «շըմբնդրֆրտ»-ով մեռած կարող է լինել... Սիմոն աղան մեռավ 1916 թվին, Թիֆլիսում. թոքախտից։ Նրա մահից հետո Անիկը մնաց այրի։ Մայրս նրա հետ ապրեց 1917 թվին մի քանի ամիս. նա պատմում է, որ Սիմոն աղայի մահից հետո Անիկը ոչնչացից էլավ...

— Տուն կուգար գիշերվա ժամը 1-ին, 2-ին. ոչ կթաներ ոտը վերին, երգ կասեր... կկանչեր ջանիմ, թե՝ «գնա ինձ համար «ենգիպեցկիս պապիրոս»-ներեն «Անի՛կ, էս կես-կիշերուն ո՞ր տեղից գտնեմ քեզ համար «ենգիպեցկիս»... Չէ՞, որ չէ... կգաշեր, կծծեր... կուլար... յալով երգ կասեր...»։

1919 թվին մեռավ Անիկն էլ...

Նրա մահից մի քանի ամիս առաջ Շնորհիկի դիակը գրանցվել է Թիֆլիսի Հավլաբարի խուլ որջերից մեկում, Անիկը նրա մահվան լուրը լսել է կատարյալ անտարբերությամբ...

12. ՄԱՀ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Թե ի՞նչ էր մահը, ես չիմացա, չկարողացա պատկերացնել, չնայած որ մեռան մարդիկ, որոնց ես ճանաչում էի, Բարուշենց Նշան ապան, Աճեմ-խաչյենց Հայկանուշ հանքամը, Սոսոյենց Թագուհին... մեռան և ուրիշ ոչինչ, այդ մահերը չթողին ինձ վրա առանձնապես ոչ մի տպավորություն։ Բայց ահա մի անգամ հիվանդացավ փոքր եղբայրս՝ Սուրենը։ Հիվանդության հինգերորդ օրը մայրիկի դեմքն ավելի մռայլոտ դարձավ, իսկ դրացիները դադարեցրին իրենց այցելությունները։ Որպես բժիշկ հրավիրված Զմո տատն դուրս եկավ սենյակից և մոտեցավ մեր տան կենվորներից Սրմային։ Սրման՝ մարանդոզ (հյուսն) Սիմոնի կինը, իլիկը ծնկների վրա դարձրեց և հարցրեց Զմո տատին՝ հիվանդի մասին։

— Կմեռնի,— չոր պատասխանեց Զմո տատն և մի պողունց բոնոթի քաշեց։ Ես այդ ժամանակ զբաղված էի սանդուղքների տակ, մարդու տախտակի վրա «հիշատակ» գրելով։ Գրել էի հիշատակը ծուռումուռ տառերով, գրել էի այնպես, ինչպես ընդունված էր առհասարակ գրել.

«Հիշատակ Գուրգեն Ահեմյան, 1912, օգոստոս, ի Վան. ես կմեռնեմ, հող կդառնամ, իմ հիշատակ թող հոս մնա, ով որ ջնջի, զայդ աչքերով կուրանա, ամեն»...

Զմո տատի «կմեռնի»-ն լսեցի այն ժամանակ, երբ հասել էի տամենա-ի վրա։ Առաջին հարցը, որ ծագեց գլխիս մեջ, այդ այն էր, թե՝ եթե Սուրենը մեռնի, նրա հիշատակը տ՞ուր պետք է մնա... Հետո կարծես նոր անդրադարձա «հող կդառնամ»-ի զարհուրելի նշանակության վրա։ Ինչպե՞ս թե հող կդառնամ։ Մարեմն մեռնելուց հետո մարդիկ հո՞ղ են դառնում և էլ չայ չե՞ն խմի... Ես սենյակ՝ մտա և մոտեցա Սուրենի փոքրիկ անկողնին։ Նա ծանր շնչում էր և տաքությունից շարժում գլուխը։ Երբ ես նայեցի նրա դեմքին և պատկերացրի, որ նա՝ Սուրենը, հող պիտի դառնա, կարծես ցրտեցին կոկորդիցս։

— Անուշ...

— Հա՛...

— Մարդ որ մեռնի, ի՞նչ կելնի...

— Կերթա երկինք... անհամ-անհամ մի խոսի...

— Էնտեղ շայ-սմալար կա՞...

— Արդարների համար կա, մեղավորներին՝ չէ...

— Սուրենն արդա՞ր ի, թե մեղավոր...

— Յա՜ա՜ա՜...— չգիտեմ ինչու բարկացավ մայրիկը և ծածկեց Սուրենին։

Ես դուրս եկա դժգոհ մայրիկից և գտա մեր դրացի Կորկոտենց Ռուբենին, որին, չգիտեմ ինչու, «Վառեկ» էինք ասում, որի համար և նա սարսափելի բարկանում էր։

— Ռուբեն, արի բան կասեմ։

Նա մոտեցավ.

— Ի՞նչ...

— Ռուբեն, մարդ որ մեռնի, ի՞նչ կանեն...

— Կխորեն...

— Վառեկ, չգիտես՝ ի՞նչ կասես...

— «Վառեկ» մի ասի, թե չէ՝ սիլա կուտես...

Գործը մատնվում էր անհաջողության, ուստի ես, որպեսզի կարողանայի օգտվել ինձնից մի քանի տարով մեծ «Վառեկ»-ի գիտական պաշարից, լեզուս փոխեցի.

— Բա մարդ որ մեռնի, երկինք չե՞րթա...

— Հոգին կերթա...

— Երկինք ի՞նչ կանի...

— Մեղավորները տժոխք կերթան, արդա՛ռներ՝ արքավութեն...

— Սուրեն մեղավո՞ր ի, թե՞ արդար...

Նա մի բոպե մտածեց և խորին համոզմունքով ասաց.

— Պատիկներ արդար են...

Ես միամտվեցի. նեղս մտա, անցա սանդուղքների հետև և մի մաքուր տախտակի վրա գրեցի.

«Հիշատակ Սուրեն Ահեմյան, 1912, օգոստոս, ի Վան. ես կմեռնեմ...»։

Ես ընկա մտածմունքների մեջ. գրել «Հող կդառնամ», թե ոչ... դեպի եղբորս տածած սերը թույլ չտվեց ինձ ավելացնել այդ մեռսաափելի խոսքերը, այլև նկատի առնելով այն հանգամանքը, որ եղբայրս շա՜տ էր փոքր, իսկ «պատիկներ արդար են», ես գրեցի.

«...երկինք կերթամ, իմ հիշատակ թող հոս մնա, ով որ ընչի, ղույգ աչքերով կուրանա, ամեն»։

Եղբորս անմահությունն ապահովելուց հետո ես այգի գնացի և սկսեցի հանգիստ սրտով ձմռան վառելու համար կաղալ ավելել...

13. ՄԱՆԴԱԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՈՆ ԱՐՇԱԿ, ՆՈՒՅՆ ԻՆՔԸ՝ ԱՐՇԱԿ ՄԱՆԹԱԿՈՒՆԻ, «ԳԻՇԵՐՆԵՐԻՒ ՄԱՍՆԱՊԵՏ»

Մի մեծ նորություն էր շրջում փողանից-փողան, դռնից-դուռ, բակից-բակ.

— Մանդաբուռենց տղեն՝ պարոն Արշակ Ստամբոլա իկն...

Հիշում եմ, թե ինչ պատկերացրի ես Ստամբոլ անվան տակ։ Ստամբոլի անունն ինձ անծանոթ չէր։ Այդ անունը ես լսել էի տատիս երգած երգերից մեկում։

Երթանք Ստամբոլ,
Պիրանք ոսկի բոլ,
Առնանք չուխտրմ ապ,
Հագնանք գորեղոր։

Հեգնանք չէ՞ր սա գավառից դեպի քաղաք ձգտող «գաբիր»-ների մասին, որոնք Ստամբոլ էին գնում «բոլ ոսկի» բերելու ոսկի հույսերով, բայց վերադառնում էին հազիվ մի զույգ սոլով, այն էլ «գորեղոր»՝ հերթով հագնելու համար... Բայց այն հանգամանքը, որ Ստամբոլի հետ կապված էր ինչոր ոսկու պատմություն, իմ մեջ ստեղծել էր կախարդական մի պատկերացում Ստամբոլի վերաբերմամբ։

Կիրակի օրերին մեր քաղաքի «ոսկի երիտասարդությունը», մաքուր կաղապարված ֆեսերով, գույնզգույն փողկապներով և վաքսած «բոթ»-երով շրջում էր ուռենիներով զարդարված փողոցներով ու նայում այս դռան, այն պատուհանին և, ինչպես ասում էին, «աղջիկներին աչքով կանին»։ Թե ինչ է նշանակում «աչքով անել», ես չգիտեի, բայց որ խորհրդավոր բան պիտի լիներ այդ աչքով անելը, դա կասկածից դուրս էր։

— Մարինա հանում, էսօր խոտեմկանց Քրիստոստուրը Պանրենց աղջկան աչքով արաց...

— Քա, աղո՞րթ...

— Սուրբ Նշան...

Լուրը բերնե-բերան հասնում է Պանրենց տուն. բայրենրան Նխշեն, գյուղից եկած մի կին, որն ապրում է սրանրա տանը լվացք անելով, գյուղացիական պարզասրտությամբ հարցնում է Պանրենց Աղավնուն.

— Խաթուն...

— Աստ...

— Խոտեմկանց Քրիստոստուր քո աղջկան ուզե՞...

— Քա վո՞վ ասաց...

— Լսա...

— Ասողի պերան վիակվի... ես իմ աղջկան Կափամաջու տղին էլ չեմ տա...

Լուրը գնացած ճանապարհով ետ է դալիս, և դռնից դուռ ծիծաղում են կանայք ու իրար հաղորդում.

— Պանրենց Աղավնին իր շաքար աղջկան Կափամաջոնց տղի՞ն պիտի տա... խո՞ղ վեր կոտիդ...

Այնուհետև լուր տարածվեց, որ Մանդաբուության պարոն Արշակը Ուրբաթ առու կոչված զրոսավայրում Պասյան Հռեփից ժամադրություն է խնդրել գիշերուվ։— Բայց ինչի՞ գիշերուվ, ցերեկով արի, կխոսենք,— առարկել է Պասյան Հռեփը։ Պարոն Արշակը նայել է Պասյան Հռեփի աչքերին և ասել է. ես գիշերի մասնագետ եմ...— Այս արտահայտությունը կայծակի արագությամբ տարածվեց Վանի գեղեցիկ սեռի աշխարհում։ Խոսում էին նրա մասին շշուկով, խորհրդավոր,— Մանդաբուենց պարոն Արշակ գիշերվա մասնագետ ի... Հետագայում լուծվեց այս խորհրդավոր հանելուկը. պարոն Արշակ Մանդաբուությանը, նույն ինքը՝ Արշակ Մանթակունին, Պոլսում, տարիներ շարունակ Շիշլիի գերեզմանատան գիշերային պահակ է եղել...

Շրջում է երիտասարդությունը փողոցից փողոց. բարակ բեղերը սրած, խոսում է՝ երբ հարկավոր է պետք եղածից բարձր, մաքո՛ւր, «գրաբա՛ր»...

— Էտ հանքամանք ուրի՛շ հանքամանք ի, ջանըմ...

Կամ՝

— Թեքնիք հարմարություններ չընկալուն պատճառով տղեն ներս ի առև...

Կամ՝

— Հին սերունդը բաթմիշ էլավ, ջանը՛մ, պան կա՝ տրամաբանի՛...

— Բոշ թատողությո՛ւն... տղա՛, առ ի չքոյե՝ էն էլ մարդ ի՞..

Մանդաբուռյան պարոն Արշակի գալու երրորդ օրը մեր թաղը պատիվ ունեցավ նրան տեսնելու. այգու դռան վրա դրացի կանայք նստած խոսում էին պանդան առօրյա նյութերի մասին, երբ հանկարծ ներսից դուրս ընկավ տան կնոջորներից Փայլածու դուդուն և շնչասպառ հայտնեց.

— Մանդաբուռենց տղեն...

Բոլորը մի բոպեում թռան սալոն. ես, որ մինչև այդ զբաղված էի «փուլ» խաղալով, վազեցի նրանց հետևից։

Փողոցի մեջտեղով գնում էր մի երիտասարդ։ Նրա փողկապը վարդագույն էր և մի քանի անգամ դարձված էր վեր ու վար. երևի նրա այդ փողկապից կարելի էր դինգ հատ սովորական փողկապ պատրաստել, բայց մեծ ապավորություն թողեց բոլորի վրա նրա արտառոց փողկապը։

— Քա՜... քռավաթին տես... կծիրանկտա...

— Սհաթի «քորդոն» ոսկուց ի...

— Ի՞նչ կիտես...

— Կերևա...

Մինչ այս, մինչ այն, երիտասարդը առանց շուրջը նայելու, աչքը հառած մի ինչ-որ հեռու կետի, երազի նման անցավ բազմաթիվ հետաքրքիր նայվածքների միջով և մտավ Բուռնաղենց փողան։

— Քա թահմին չարինք, դաշնա՞կ էր, թե հնչակ...

— Դաշնակ էր, ես տեսա...

Ինչի՞ց պետք էր դուշակել որևէ մարդու կուսակցական պատկանելությունը, ես հետո իմացա։ Պարզվեց, որ այդ կարելի է իմանալ «ֆես»-երի դրվածքից. դաշնակցականներն իրենց ֆեսերը թեքում են դեպի «պուճուճակ» ծոծրակը, հըն-

չակները՝ դեպի ականջը, իսկ արմենականները՝ դեպի ճակատը...

Հետագայում Մանդաբուռենց տղի մասին ես հետաքրքիր նորություններ լսեցի. նա պարտադրել է իր քրոջը՝ վար առնել շարշափը և փողոց դուրս գալ «վելո»-ով. սա մի չտեսնված աղմուկ բարձրացրեց պահպանողական շրջաններում։ Իսկ արմենականների մեջ Մանդաբուռենց «թիլո»-ն դարձավ ծաղր ու ծանակի առարկա. ընդամենը տասը տարի է, ինչ բաժանվել է իր հայրենիքից, իսկ Պոլսում եղել է ոչ ավել, ոչ պակաս, քան Շիշլիի գերեզմանատան պահակ, նա՝ Մանդաբուռենց «թիլո»-ն ցույց է տալիս, որ ամեն ինչ մոռացել է։ Լիքսպես, օրինակ, առաջին օրը, երբ հոր՝ Մարկոս աղայի հետ նստել է սաքու չայ խմելու, նա նայել է դեպի արևելք և քթի մեջ հարցրել է.

— Ա՛յս լեռները ի՞նչ լեռներ են...

— Վարագա սարն է, բալամ,— պատասխանել է Մարկոս աղան և խորին երանությամբ նայել է իր կնոջ՝ Նոյեմողարի դեմքին...

Թեև այս իրողությունը Ցարգուլյան Հմայակը պատմեց՝ պարոն Մկրտչին, ծաղրելու նպատակով Ստամբոլից եկած Մանգաբուռյանին, բայց ինձ վրա թողեց բոլորովին ուրիշ տպավորություն։ Ես սկսեցի երազել այն երանելի օրն ու ժամը, երբ ես էլ տասը տարի Ստամբոլում ապրելուց հետո կվերադառնամ Վան, Սուրենի, Խորենի, Վարդանի հետ տանիք կբարձրանամ, կնայեմ դեպի արևելք և կասեմ.

— Ա՛յս լեռները ի՞նչ լեռներ են...

14. ՋՈՒԼՀԱԿՆԵՐ

Ես մինչև հիմա դեռ լսում եմ նրանց մաքրքների ձայնը...

Նրանց պատուհանները նայում էին ուղիղ մայրիկանոց տան դրսի բակի վրա (կար նաև ներսի բակ)։ Վաղ առավոտից լսվում էր նրանց «չըխկ-չըխկ»-ը, գործում էին նրանք, կտավ էին գործում և փռում էին տափակ կտուրներին, արևի տակ չորանալու։

Երբ շորանում էին կտավները, հավաքում էին, կարմիր ներկում և այս անգամ երբ փռում էին տանիքների վրա, տանիքներն ստանում էին տոնական տեսք։

Ինչպե՞ս պայծառ եմ լսում ես նրանց մաքրների ձայնը...

Այնտեղ, հորերի առաջ, աշխատում էին մոտ քառասուն բանվորներ և մի բանվորուհի. Քինոն էր կոչվում այդ ածուխի պես սև մազերով և կաթի նման սպիտակ դեմքով աղջիկը։ Նա հակերն էր փաթաթում և երգում էր.

«Աշունն էկավ, թափավ կազալ.
Իշխանն էկավ ձեռք մավուզարա։

— Քինո՛,— կանչում էր բանվորներից մեկը,— դու վի՞ր կառնես...

— Վարպետ Քրիստոստուրին,— պատասխանում էր Քինոն՝ համարձակ և կշկշան ծիծաղով։

Վարպետ Քրիստոստուրը, մոտ 60 տարեկան մի պատկառելի բանվոր, նայում էր ալեխառն հոնքերի տակից, ժպտում էր բարի ժպիտով և ասում.

— Մեք գյավազանա, գործ արեք... Քինո, էլա՝ ակընջներդ կկտրեմ...

Ես բարեկամություն հաստատեցի բանվորներից մեկի հետ։ Այդ պատահեց այսպես։ Մի մեծ տանձ ձեռքիս անցնում էի ջուլհականոցի առաջով, գլուխս դռնից ներս կոխեցի և նայեցի. ես շատ էի ուզում ականատես լինել մի կտոր կտավի սկզբից մինչև վերջ գործելու աշխատանքին։

— Հեյ գիդի Աճմոնց Քրիքորի տղա,— լսեցի ես ներսից և վատահաբար մոտեցա ինձ ճանաչող ջահել ջուլհակին։

— Ես քեզ տանձ կտամ, թող նստեմ կողքիդ։

— Նստիր,— պատասխանեց ջուլհակը,— նստիր, տանձդ էլ կեր...

— Չէ, տանձը քեզ,— առարկեցի ես, սիրտ առած նրա մերժումից։

— Լավ, ձիկ էլնի,— համաձայնվեց նա, վերցրեց տանձը և միանգամից առողջ ատամներով կիսեց դեղին և մեծ տան-

ձը։ Նա տանձը կերավ մեծ ախորժակով, և այդ հանգամանքը մեծ հաճույք պատճառեց ինձ...

Նա ինձ կապեց ջուլհականոցին, այդ ջահել ջուլհակը, որովհետև ինձ հետ խոսում էր ոչ թե որպես փոքրահասակի, այլ կարծես իրեն հասակակից մարդու հետ։ Հետո նա ծիծաղելի հեքիաթներ էր պատմում ինձ և հեքիաթի վրանրաց կողմերը չէր թաքցնում ինձանից։ Նա մինչև անգամ մի օր իմ կարծիքը հարցրեց Քինոյի մասին։ Ես անկեղծ կերպով նրան ասացի, որ Քինոն շատ լավ ձայն ունի, և որ եթե աստվածը մի օր մաներ ջուլհականոցը և երգեր, նրա նման քաղցր ձայնով չէր կարող երգել։ Նա ոգևորությունից սկսեց ավելի արագ-արագ նետել մաքոքները ձեռքից ձեռք և հայտնեց, որ շուտով պատկվելու է նրա հետ։ Այս առթիվ ես նրան հայտնեցի, որ 15 տարեկան դառնալուց հետո ես էլ պիտի պատկվեմ։ Նա լուրջ դեմքով ինձ հակառակեց, գտնելով, որ տասնհինգ տարեկան հասակում ամուսնանալը լավ չէ, և որ դրա համար հարկավոր է լինել եթե ոչ 17, գոնե 16 տարեկան։ Ես առարկեցի, որ այդ ժամկետն ինձ համար ոչ թե ես, այլ տատս է նշանակել, և որ ես ավելի շուտ աստծուն և Հիսուսին կվիրավորեմ, քան իմ տատի ընդունած որոշումը կխախտեմ...

Ջուլհականոցի տերը՝ Հակոբ աղան, կամ, ինչպես նրան կանչում էին, Ակբաղան, մի ուռած դեմքով, հաստ, սրած բեղերով մարդ էր. ես դեռ մինչև հիմա նրա բեղերի չափ երկար բեղ չեմ տեսել։ Նա կանգնում էր դռների մեջ, սրում էր բեղերը մերթ դեպի վեր, այդպիսի դեպքերում բեղերի ծայրերը հասնում էին մինչև ճակատը, մերթ ուղղահայաց, քաշելով մինչև ականջները. սրելուց հետո նա ոլորում էր քթի երկու կողմերի վրա կոր գծով և խուլտտ ձայնով մի քանի նկատողություն անելուց հետո հեռանում էր։

Իսկ ջուլհականոցի հյուսիսային կողմի պատուհաններից ավելուկների և տուղտերի զվարթ խմբերը ներս էին նայում և, մաքոքների համաչափ տակտին բոլորովին հակառակ, օրորվում էին, օրորվում էին դանդաղ ու անկանոն, կարծես ստիպված, ակամա...

Մի օր էլ ես նստել էի իմ սովորական տեղը և նայում էի

գործվող կտավներին։ Սկսվեց նրանից, որ ջուլհակներն սկսեցին ձեռք առնել Ակբաղին, իհարկե, նրա բացակայությամբ։

— Քինո,— մաքոքների աղմուկի միջից իր ձայնը լսելի դարձնելու համար բարձրաձայն կանչեց Աբելը,— Ակբաղի բեղերը որ քն տային, ի՞նչ կանիր։

— Կնկադ համար թաթ կգործի...

— Ես թոռ կշինի, քն կրռնի,— ասաց իմ ծանոթը Քինոյին և շփկնեց. Քինոն նայեց նրան ու ժպտաց մի տնայնագործական կոկետությամբ։

Այդ միջոցին ներս մտավ ըստ երևույթին Հակոբ աղայի ծառան և Քինոյին ինչ-որ բան ասաց ցած ձայնով։ Քինոն, գլուխը թափ տվեց բացասական և սկսեց ավելի արագ-արագ ծալել. ծառան մի բան էլ ասաց և, ուսերը շարժելով, գնաց. իմ ծանոթը, որ մինչ այդ անհամբերությամբ հետևում էր նրանց շարժումներին, նրա գնալուց հետո հանգստացավ և սկսեց երգել։

Էլեք, տեսեք, ո՞վ է կերի գէջ,
Էլան, տեսան գելն էր կերե գէջ...

Դռների մեջ երևաց Ակբաղան։

— Քինո՛,— կանչեց նա, առանց Քինոյի կողմը նայելու։

— Ի՛նչ,— պատասխանեց Քինոն, ընդհատելով ծալելը։

— Ջահնամվի տուն՝ քիչ աշխատի։

— Ջե՛մ,— համառեց Քինոն,— իմ աշխատանք էստեղ ի...

— Տուն ջահնամվի քե կասեմ, օռոսպի...

— Քո կնիկն ի օռոսպին, քո մերը, արիկա՛, ի՞նչ ես կպել ջահել աղջկա ջանից... միտքդ ի՞նչ է...

Այս ասաց իմ ծանոթը և ընկավ Ակբաղի ու աղջկա մեջ։

— Վա՛յ ես քո...— մռնչաց Ակբաղան և առաջին իսկ դաղդահի վրայից վերցնելով երկաթի մի կտոր՝ շպրտեց դեպի Քինոյի պաշտպանը. մի րոպե ոչ ոք չիմացավ ինչ պատահեց և ինչ պետք է անել. երկաթի կտորը անցավ երիտասարդ ջուլհակի ուսի վրայով, և հանկարծ լսվեց Քինոյի սուր ճիչը։ Նա ընկավ գետին պատռված ճակատով։

Հանկարծ բոլոր մաքոքները լռեցին։

Քինոյին դուրս տարան, տարան տուն, իմ ծանոթն էլ հետը։

Երեք օր ամբողջ ջուլհականոցն անհանգիստ էր, մաքոքներն առաջվա պես չէին թռչկոտում, ինչ-որ ջղային անհանգստություն բռնել էր ամենքին, մինչև անգամ ինձ, իսկ պատուհանների տակ ավելուկներն ու տուղտերն ավելի անհանգիստ էին օրորվում, ավելի կասկածով։

Իմ ծանոթը ոչ միայն ինձ հետ, այլև բոլորի հետ դադարից խոսելուց։ Նա գործում էր, գործում էր մեքենաբար և հաճախ անհանգիստ հայացքով նայում էր դեպի դուրս։ Երրորդ օրը ես սիրտ արի հարցնել Քինոյի առողջության մասին. նա հաղիվհաղ պատասխանեց.

— Թա՜ء էլ Քինոն երգի՞...

Չորրորդ օրը ես լսեցի, որ Քինոն մահացել է։ Ես չգնացի ջուլհականոց, չտեսնելու համար իմ ծանոթի վիշտը. բայց ճաշից հետո չհամբերեցի և գնացի. իմ ծանոթը գործում էր, կտավ էր գործում, և մաքոքները թռչում էին ձեռքից ձեռք, թռչկոտում էին և ոստոստում։

Դռների մեջ երևաց Սկրաղան. նա ձեռքով արեց, որ թողնեն գործելը, բոլորը լռեցին։

— Քինոյին վաղ պիտի թաղեն, վաղ կիրակի է... Եկեք բոլորդ հուղարկավորության. ձեր պարտքը կատարեք... ժամանակը ես ասի վերես... Սեդրակ,— դարձավ նա իմ ծանոթին,— դազդահիցդ շորս արշնի չափ կտավ կտրի...

Բոլորը սարսռացին վրեժխնդրության այս հրեշավոր ձևից. Հակոբ աղան ուզում էր Քինոյին թաղել իր սիրած տղայի ձեռքով գործած կտավի պատանքով...

Սեդրակը շարժվեց ձուլածո բրոնզի պես, չափեց կտավը, կտրեց և ընդհանուր լռության մեջ շարժվեց դեպի Հակոբ աղան և պարզեց նրան սպիտակ կտավը։

Բոլորն էլ կարծում էին, որ մի վատ բան պիտի պատահի. Հակոբ աղան գունատվել էր իր ձեռքի կտավի պես... բայց Սեդրակը նույն հանգստությամբ ետ դարձավ իր տեղը։

Նույն գիշեր, երբ ես հանգիստ քնել էի տատիս հետ, տատս ինձ զարթեցրեց.

— Գուրի՛ս, Գուրի՛ս, յա՛նկուն ի...

Նա չգիտեի «յանկունն» ինչ բան էր, բայց երբ աչքս բացի և սենյակը լուսավորված տեսա կրակի լույսից, հասկացա...

Նա վազեցի դեպի պատուհանը. ջուլհականոցը շրջապատված էր կրակե լեզվակներով։

ՎԵՐՋԱԲԱՆ

...Եվ օրերը հեռացած,
ստվերների պես ծածան
կնատեն արտիդ.—
մանկություն իմ ոսկեծամ,
մանկություն իմ, որ անցար
նոր ցանած արտից։
(«Երեք բարդի», Գ. Մաճառի)

Քաղաքը, որի մասին գրեցի ես, և ուր անցավ իմ մանկությունը, աշխարհագրական քարտեզների վրայից չի անհետացել։ Նա կա, նա ապրում է, նրա փողոցներում գուցե այս րոպեին էլ մանուկներ են խաղում։ Քաղաքը, որի մասին գրեցի ես, և ուր անցավ իմ մանկությունը, հաճախ, շատ հաճախ, դառնում է ուղեղիս մեջ մշուշային գծերով, ժպտում է, պարզվում, ուզում է խոսել ու խոսում է.— «Դու հիշո՞ւմ ես ինձ»,— հարցնում է նա։— «Հիշում եմ,— պատասխանում եմ,— հիշում եմ ո՛չ թե նրա համար, որ աշխարհիս երեսին գոյություն չունի քեզանից ավելի գեղեցիկ քաղաք, օ, ո՛չ, հիշում եմ, որովհետև դու միակ քաղաքն ես, ուր անցավ իմ անկրկնելի մանկությունը, և նա էր, այն գանգրահեր մանուկը, որ գեղեցկացրեց քեզ...»։ Հետո հարցնում է նա.— «Ո՞ւր է տատիկդ, նրան դու մայրիկ էիր ասում, իսկ նա քեզ «Զամբիլ-Ֆրոշ» էր պատմում»։— «Նա կորավ գաղթի ճանապարհին,— պատասխանում եմ ես,— նրանից հետո դեռ մինչև հիմա էլ, երբ ես հանդիպում եմ պառավ մուրացուհիների, մի րոպե կանգնում եմ և ուշադրությամբ զննում նրանց դիմագծերը, գուցե, մտածում եմ, ապրում է իմ տատիկը, հույսը

կտրել է, որ մեզ կգտնի, և մուրացկան է դարձել... Ես գիտեմ, նա շատ ուրախ կլինի, ինձ տեսնելով։— Ո՞ւր է,— կասեմ ես նրան,— իմ տասնհինգ տարին վաղուց է անցել, իսկ ես մինչև հիմա դեռ ոչ մի անգամ կարգին չեմ ամուսնացել.. Իսկ հիմա,— կասեմ ես նրան,— միասին նստենք «շքմընդրֆրո» ու գնանք Լենինական... Ես նրան կնվիրեմ իմ գրքերից մի-մի օրինակ և կխնդրեմ, որ նա մի անգամ էլ պատմի «Զամբիլ-Ֆյուշ»-ը. տեսնենք՝ կարո՞ղ է ինձ լացացնել...»։

— Իսկ ո՞ւր է Նադելին,—հարցնում է նա։—«Նա ապրում է Սեւաստոպոլում,— պատասխանում եմ ես,— իմ խմբի զինվորականից Գառնիկը՝ նրա փոքր եղբայրը, կոշկակարությամբ է զբաղվում և պահում է ամբողջ ընտանիքը։ 24 թվին ես լսեցի, որ Նադելին նշանվել է մի պրոֆմիության անդամի հետ։

Եվ ապա այն քաղաքը ժպտում է ինձ հրապույրից զարկված պչրուհու նման, համառորեն կախվում է ուղեղիս թելերից և չի ուզում հեռանալ.— նրա մշուշում Իշխանն է անցնում մաուզերը ձեռքին, Հյուսեյն փաշան մտնում է Շահաբաղցյանենց տուն խնջույքի, իսկ Նադելին բա՛հ-բա՛հ ծիծաղում է ինձ վրա.

— Իշխան իմ հոր դոստն է...

Հետո շքավոր գյուղացիներն են հեծեծում անցյալի կապույտ մշուշում։ Անցյալի կապույտ մշուշը չի խանգարում սակայն, որպեսզի ես տեսնեմ նրանց դեմքերի վրա մտրակի կապույտ երիզները։ Քինոյի հուղարկավորության կոշնակների ձայնն եմ լսում, երիտասարդ ջուլհակը կանգնել է ձեռքին բռնած երկու արշին սպիտակ կտավ, հետո ջուլհականոցի կարմիր բոցերը կարմիր են ներկում անցյալի կապույտ մշուշը։ Անցյալի կապույտ մշուշից ելնում է քեռիս. նա կանգնում է «մեռած քաղաքի» ավերակների վրա, ծեծում է կուրծքը և հավատացնում, որ կյանք է տվել «մեծ գործին»... Փոքրիկ տատս է շտապ-շտապ գուլպա հյուսում. բարձրահասակ բարդիները խշխշում են այգու դռան առաջ, իսկ փոքրիկ Շնորհիկը նայում է իր դիմացը փռված սպիտակ ճանապարհին։

— Վերջացնենք,— ասում եմ ես,— այսքան քեզ համար

բալական է։ Ես վերջակետ եմ դնում և ուզում եմ վեր կենալ, բայց նա չար հեգնանքով ասում է.

— Դու չես ազատվի ինձանից, չէ՞ որ մանկությունն ամենապայծառ օղակն է մարդկային կյանքի օրերի շղթայում... Ասա՛, մի՞թե դու այնքան միամիտ ես, որ կարծում ես, թե փակեցիր ինձ հետ քո հաշիվները...

— Երդվում եմ քրոջս կորած ճանապարհով, որ փակեցի, — ասում եմ ես,— հալատա ինձ։ Դու ինձ չես կարող կախարդել։ Ես հիմա արդեն քաղաքացի եմ, ունեմ նոր և նոր ընկերներ. նրանց հետ միասին մենք պայքարում ենք համայն աշխարհի ջուլհակների ազատագրության մեծ գործի համար։ Եվ եթե ես հաճախ վատ եմ պայքարում, այդ նրանից է, որ ես դեռ չեմ սովորել կարգին պայքարել։

... Մանկություն, հեռավոր օրերի ոսկե գիրք, հեռավոր օրերի մրդասատան, ահա փակում եմ քո դռնակը, ահա փակում եմ քեզ։ Ես պատանի դարձա մի գիշերում, քնեցի մի օր մանուկ և զարթնեցի պատանի, որպես մահիկ ննջեցի և արթնացա որպես լիալուսին։

Իմ պատանեկան տարիների մասին ես կգրեմ հետո, գուցե մի քանի տարուց, գուցե մի քանի ամսից, չգիտեմ. մի բան պարզ է միայն, որ անպայման պիտի գրեմ, որովհետև այդ շրջանի հետ կապված են բազմաթիվ դեպքեր ու դեմքեր, որոնք սպասում են իրենց վրձինին և կտավին։

Իսկ հիմա լամպը մարենք և քնենք։

1928 թ. ամառ
Ստեփանավան
Հյուրանոց «Տաշիր»։